ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ

ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը նպատակաուղղված էր մակրոտնտեսական կայունության ապահովմանը, տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանմանը՝ զուգահեռաբար իրականացնելով զարգացմանն ուղղված բարեփոխումները:

2016 թվականին տնտեսական աճը հանրապետությունում կազմել է 9.2 տոկոս: Անվանական արտահայտությամբ համախառն ներքին արդյունքը (այսուհետ՝ ՀՆԱ) կազմել է 229.7 մլրդ ՀՀ դրամ (2015 թվականին՝ 209.3 մլրդ ՀՀ դրամ): Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 1,577.3 հազ. ՀՀ դրամ կամ 3,282.7 ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 1443.8 հազ. ՀՀ դրամի կամ 3021.0 ԱՄՆ դոլարի դիմաց:

2016 թվականին արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 59.0 մլրդ ՀՀ դրամ՝ 2015 թվականի համեմատ իրական արտահայտությամբ աճելով 9.7 տոկոսով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 68.5 մլրդ ՀՀ դրամ՝ իրական արտահայտությամբ աճելով 7.4 տոկոսի չափով:

Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալը կազմել է 45.7 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 9.0 տոկոսով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2016 թվականին կազմել է 338.0 մլն ԱՄՆ դոլար՝ 2015 թվականի համեմատ աճելով 7.4 տոկոսով, ընդ որում ներմուծման ծավալները աճել են 1.7 տոկոսով՝ կազմելով 256.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ արտահանման ծավալները՝ 30.6 տոկոսով և կազմել են 81.1 մլն ԱՄՆ դոլար:

2016 թվականին 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմել է 480.49 ՀՀ դրամ (2015 թվականին՝ 477.92 ՀՀ դրամ), 1 եվրոինը՝ 531.85 ՀՀ դրամ (2015 թվականին՝ 530.60 ՀՀ դրամ):

Հաշվետու տարում առևտրի շրջանառության ծավալը կազմել է 99.6 մլրդ ՀՀ դրամ՝ 2015 թվականի համեմատ նվազելով 12.6 տոկոսով, բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը՝ 53.9 մլրդ ՀՀ դրամ՝ 2015 թվականի համեմատ աճելով 3.7 տոկոսով:

Զբաղվածների (վարձու աշխատողների) թվաքանակն ըստ տնտեսության տարբեր ճյուղերի 2016 թվականին կազմել է 43,205 մարդ: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 464-ով:

Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը 2016 թվականին կազմել է 152,707 ՀՀ դրամ, 2015 թվականի համեմատ անվանական աճը կազմել է 1.1 տոկոս:

Տնտեսական աճին զուգահեռ ավելացել են բնակչության դրամական եկամուտները և ծախսերը: 2016 թվականին բնակչության դրամական եկամուտները 2015 թվականի համեմատ ավելացել են 3.6 տոկոսով՝ կազմելով 161.6 մլրդ ՀՀ դրամ, դրամական ծախսերը աճել են 3.3 տոկոսով՝ կազմելով 155.6 մլրդ ՀՀ դրամ:

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ առևտրային բանկերի վարկային ներդրումները կազմել են 117.7 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 18.0 տոկոսով, բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների գումարը կազմել 41.5 մլրդ ՀՀ դրամ՝ 2015 թվականի 36.2 մլրդ ՀՀ դրամի դիմաց (աճը՝ 14.8 տոկոս):

Սպառողական գների ինդեքսը 2016 թվականին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ կազմել է 98.6 տոկոս:

<u>Տնտեսական քաղաքականություն</u>

2016 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության իրականացրած աշխատանքներն ուղղված էին որակական տնտեսական զարգացման ապահովմանը, տնտեսության և նրա տարբեր ճյուղերի դիվերսիֆիկացման խթանմանը, գործարարությամբ զբաղվելու համար բարենպաստ պայմանների ապահովմանը, գործարարների և սպառողների իրավունքների ու շահերի համակողմանիորեն պաշտպանվածությանը, պետություն-մասնավոր հատված համագործակցության արդյունավետության բարձրացմանն, տնտեսվարող սուբյեկտների արտահանման կարողությունների զարգացմանը: Տնտեսական զարգացման քաղաքականությունը 2016 թվականին իրականացվել է հետևյալ ռազմավարական ուղղություններով.

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում

Կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններից է գործարար և ներդրումային միջավայրի շարունակական բարելավման ապահովումը՝ նպատակ ունենալով այն դարձնել երկրի մրցակցային առավելություններից մեկը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի թիվ 50-Ն որոշմամբ հաստատված՝ գործարարությամբ զբաղվելու հետ առնչվող վարչարարական ընթացակարգերի պարզեցմանը, փոքր և միջին ձեռնարկությունների աճի խթանմանը, հարկային հաշվետվությունների կրճատմանը և պարզեցմանը, հարկ վճարողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն նպատակաուղղված «Լեռնային Ղարաբաղի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի» շրջանակներում 2016 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության հարկային ծառայության պաշտոնական կայքէջում պարբերաբար տեղադրվել են տեղեկություններ՝ էլեկտրոնային հաշվետվություններ ներկայացնողների վերաբերյալ, ինչպես նաև 2016 թվականի հարկ վճարողների կողմից առավել հաճախակի բարձրացված հարցերն ու դրանց պատասխանները,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությունում կազմակերպվել են ուսուցողական սեմինարներ հաշվապահների հետ՝ «Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների լրացման և հանձնման ընթացակարգեր» թեմայով:

Ներդրումային քաղաքականության իրականացման շրջանակներում 2016 թվականին փոփոխություններ են կատարվել «Շահութահարկի մասին» օրենքի 38-րդ հոդվածում: Եթե նախկինում օրենքի նշված հոդվածով սահմանված արտոնությունից օգտվում էին միայն պետական գրանցման պահին և դրան հաջորդող 3 տարիներին ներդրումներ կատարած կազմակերպությունները, ապա օրենքի փոփոխության արդյունքում նշված արտոնությունը տարածվել է հայտը ներկայացնելու տարվան նախորդող 3 տարիներին ներդրումներ կատարած կազմակերպությունների վրա՝ անկախ գրանցման պահից:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը շարունակել է աշխատանքներ իրականացնել փոքր ու միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) զարգացման, պետական աջակցության խորացման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ՓՄՁ պետական աջակցության 2016 թվականի ծրագրի շրջանակներում Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից կատարել են հետևյալ աշխատանքները.

- 2016 թվականին ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ենթածրագրի շրջանակներում ֆինանսավորվել է 28 սուբյեկտ: Այդ սուբյեկտներին տրամադրված վարկի ընդհանուր գումարը կազմել է 960.0 մլն ՀՀ դրամ, իսկ սուբսիդավորման ընդհանուր չափը՝ 280.0 մլն ՀՀ դրամ, ընդ որում՝ արդյունաբերական ոլորտի սուբյեկտներին տրամադրված վարկի գումարը կազմել է 580.8 մլն ՀՀ դրամ (60.5 տոկոս), ծառայությունների ոլորտի սուբյեկտներին՝ 115.2 մլն ՀՀ դրամ (12 տոկոս), առևտրի ոլորտի սուբյեկտներին՝ 249.6 մլն ՀՀ դրամ (26 տոկոս), գյուղատնտեսական ոլորտի սուբյեկտներին՝ 14.4 մլն ՀՀ դրամ (1.5 տոկոս):
- ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի շուկաներում առաջմղմանն աջակցության ենթածրագրի շրջանակում 2016 թվականին ապահովվել է 35 ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը Արցախի, Հայաստանի Հանրապետության և արտերկրյա ցուցահանդեսներին, շնորհանդեսներին, համաժողովներին և տոնավաճառներին: Մասնավորապես, Արցախի Հանրապետության ՓՄՁ սուբյեկտները ակտիվորեն մասնակցել են Մոսկվայում կայացած «Պրոդէքսպո 2016» ցուցահանդեսին, Ծաղկաձորում կայացած «Եվրասիական տնտեսական միություն. Հայաստան-համագործակցություն» ամենամյա տնտեսական համաժողովին, Երևանում կայացած «Արտադրված է Հայաստանում 2016», «ՊանԱրմենիան էքսպո 2016» և «Արմպրոդէքսպո 2016» ցուցահանդեսներին, Չինաստանում կայացած «Guangzhou International Import Food Expo 2016» սննդամթերքի միջազգային ցուցահանդեսին, Լոնդոնում կայացած «World Travel Marketing 2016» զբոսաշրջության ցուցահանդեսին: Նշված ծրագրի շրջանակում ծախսվել է մոտ 14.0 մլն ՀՀ դրամ գումար:

- «ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ենթածրագրի շրջանակում ապահովվել է ՓՄՁ սուբյեկտների համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման մատչելիությունը, ընդլայնվել են խորհրդատվական ծառայություններից օգտվելու հնարավորությունները:

2016 թվականին «ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ենթածրագրի շրջանակում հրատարակվել է.

- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր բնութագիրը և հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները» բուկլետը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակներով,
- «Ներդրողի ուղեցույց» գրքույկը հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակներով,
- Երևանում «Արտադրված է Հայաստանում 2016» ցուցահանդեսին մասնակցող ընկերությունների համար բուկլետները և այցեքարտերը,
- «Արցախի շինարար 3» տեղեկատվական պարբերականը, որն ընդգրկում է ընդհանուր տվյալներ և ցուցանիշներ շինարարության ոլորտի մասին, ինչպես նաև տեղեկություններ ոլորտում գործող մի շարք ընկերությունների մասին,
- 2017 թվականի օրացույցները, որոնք պարունակում են տեղեկություններ Արցախի ներդրումային հիմնադրամի համապատասխան ծրագրերի մասին:

«ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ենթածրագրի շրջանակում իրականացված միջոցառումների ծախսերը կազմել են ավելի քան 12.0 մլն ՀՀ դրամ:

Ընդհանուր առմամբ ՓՄՁ պետական աջակցության ծրագրի շրջանակում Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից 2016 թվականին ծախսվել է մոտ 306.0 մլն ՀՀ դրամ գումար:

Հիփոթեքային վարկային շուկա

2016 թվականին շարունակվել է առևտրային բանկերի միջոցով հիփոթեքային վարկավորմամբ բնակարանների և բնակելի տների ձեռքբերմանը պետական աջակցության ծրագրի իրականացումը՝ հետևյալ ուղղություններով.

- «Հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրով 90 քաղաքացու տրամադրվել է 1.1 մլրդ ՀՀ դրամի վարկ: Տարվա ընթացքում վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանն ուղղված գումարը կազմել է 526.8 մլն ՀՀ դրամ,
- «Հիփոթեքային վարկերի կանխավճարների նպատակային փոխառությամբ տրամադրում» ծրագրին ուղղվել է 85.3 մլն ՀՀ դրամ՝ ֆինանսավորվել են 29 քաղաքացիներ,
- «Իրացնելու նպատակով բնակարանների (առանձնատների) կառուցում և գնում» ծրագրին ուղղվել է մոտ 2.7 մլրդ ՀՀ դրամ,
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության ծառայողների կողմից բնակարանների և բնակելի տներ ձեռք բերելու ֆինանսական աջակցություն» ծրագրին ուղղվել է 35.8 մլն ՀՀ դրամ,
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակարանային պայմանների կարիք ունեցող պաշտպանության նախարարության համակարգի ծառայողներին և զինվորական թոշակառուների ընտանիքներին բնակարանների և բնակելի տներ ձեռք բերելու ֆինանսական աջակցություն» ծրագրով փոխառություն է ստացել 13 զինծառայողի ընտանիք՝ 77.2 մլն ՀՀ դրամ գումարի չափով,
- «Հիփոթեքային փոխառություններ գյուղաբնակ քաղաքացիներին» ծրագրով փոխառություն է տրամադրվել 68 ընտանիքի: 36 ընտանիք ստացել են երկրորդ և հաջորդ փուլերի փոխառությունները: Տարվա կտրվածքով տրամադրված փոխառությունների ընդհանուր գումարը կազմել է 83.5 մլն ՀՀ դրամ:

Արդյունաբերություն

Արդյունաբերության ոլորտում 2016 թվականին հաջողվել է ապահովել դրական ցուցանիշներ: Փաստացի գներով թողարկվել է 58.9 մլրդ ՀՀ դրամի արդյունաբերական արտադրանք՝ նախորդ տարվա նկատմամբ ապահովելով աճ 9.5 տոկոսի չափով: Արդյունաբերության աճին հատկապես նպաստել է «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ճյուղի աճը՝ 9.9 տոկոսով: Հանքագործական արդյունաբերության ոլորտում 2016 թվականին 39.2 տոկոսով աճել են արդյունահանման ծավալները՝ ի շնորհիվ Կաշենի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման: Մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալները 2016 թվականին կրճատվել են 1.8 տոկոսով:

Որակի ենթակառուցվածքներ

2016 թվականին որակի ենթակառուցվածքի ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված էր ոլորտի գործունեության կանոնակարգմանը, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության մակարդակի բարձրացմանը:

Համապատասխանության հավաստման բնագավառում հավատարմագրման վկայագիր է տրվել «Պրոֆիլ» ՍՊԸ ճանապարհաշինանյութերի փորձարկման լաբորատորիային, միաժամանակ նախկինում հավատարմագրված թվով 5 կազմակերպություններում («Սերմաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» ՓԲԸ հացահատիկային ու բանջարաբոստանային կուլտուրաների սերմերի, «Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՈԱԿ-ի սանիտարահիգիենիկ և մանրէաբանական, «Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման կենտրոն» ՊՈԱԿ-ի սննդամթերքի, «Հանրապետական անասնաբուժական և սննդամթերքի փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ-ի, «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի փորձարկման լաբորատորիաներում և «Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման կենտրոն» ՊՈԱԿ-ի սերտիֆիկացման մարմնում) հսկողության նպատակով կատարվել են պարբերական գնահատման աշխատանքներ: Կասեցվել է «Արտադրական կոմբինատ-3» ՓԲԸ-ի և «Մռակած» արտադրական կոոպերատիվի փորձարկման լաբորատորիաների գործունեությունը:

Ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման շրջանակներում իրականացված քաղաքականությունը հիմնականում նպատակաուղղված էր սպառողների կյանքի, առողջության պահպանմանը, շրջակա միջավայրի համար անվտանգ արտադրանքի արտադրմանը և ծառայությունների մատուցմանն ու դրանց որակի ապահովմանը:

«Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2016 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- տնտեսվարող սուբյեկտների հետ կնքվել են 3 պայմանագրեր և տրամադրվել 51 ստանդարտներ՝ տեղեկատվության տրամադրման և լաբորատոր փորձարկումների իրականացման նպատակով,
- կատարվել է տնտեսվարող սուբյեկտների կողմից հաստատված տեխնիկական պայմանների 18 փորձաքննություն և գրանցում,
- տրամադրվել են տեղական արտադրանքի 77 և հանրային սննդի ծառայության մատուցման 48 համապատասխանության սերտիֆիկատներ,
- կատարվել են հսկողության աշխատանքներ՝ նախկինում սերտիֆիկատ տրամադրված արտադրանքի արտադրման և հանրային սննդի կազմակերպման 39 սուբյեկտների նկատմամբ,
- կատարվել են իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացված արտադրանքների փորձարկումներ, որոնց արդյունքում կազմվել և տրամադրվել են 178 համապատասխանության եզրակացություններ,
- չափման միջոցներ օգտագործող տնտեսվարող սուբյեկտներում պարբերական ստուգաչափման են ենթարկվել 1,035 կշեռքներ, 198 կշռաքարեր, 85 վառելիքաբախշիչ աշտարակներ, 6,295 էլեկտրական և գազի հաշվիչներ, 19 ավտոմոբիլային կշեռքներ, 88 ավտոմոբիլային սակահաշվիչներ և արագաչափեր, 5 ավտոցիստեռններ և 88 այլ չափման միջոցներ:

<u>Գյուղատնտեսություն</u>

Որպես երկրի տնտեսության առաջատար ճյուղի՝ գյուղատնտեսության ոլորտում 2016 թվականի ընթացքում վարվող քաղաքականությունն նպատակաուղղված էր հողօգտագործման ու անասնապահության վարման կատարելագործման միջոցով գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ավելացմանը, ոլորտի գերակա ուղղություններին համապատասխան աշխատանքների կատարմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը:

2016 թվականին գյուղատնտեսության ոլորտին պետական բյուջեից հատկացված միջոցները (առանց պետական կառավարչական հիմնարկների պահպանման ծախսերի) ուղղվել են հետևյալ ծրագրերի իրականացմանը՝

- «Աջակցություն «Բույսերի պաշտպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը» ծրագրով հաշվետու տարում նշված ընկերության կողմից իրականացվել է թունանյութերի 165 նմուշի լաբորատոր հետազոտություն /անալիզ/, հանքային պարարտանյութերի

10/22 նմուշ/անալիզ, հողերի ագրոքիմիական 845/4225 նմուշ/անալիզ: Հանրապետությունում կայուն բուսասանիտարական վիճակի ստեղծման նպատակով շուրջ 72.8 հազար հեկտարի վրա կատարվել են ցանքսերի դաշտային հետազոտություններ և բուսասանիտարական վիճակի ուսումնասիրություններ.

- «Մշակաբույսերի սերմերի որակի ստուգման և սորտափորձարկման գծով պետական պատվեր» ծրագրով «Սերմնաբուծության և սելեկցիոն նվաճումների պահպանության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջոցով սորտափորձարկման է դրվել գյուղատնտեսական մշակաբույսերի 36 սորտ: Լաբորատոր քննությամբ ստուգվել են հացահատիկային և հատիկաընդեղենային՝ 400, յուղատու և տեխնիկական՝ 14, բանջարաբոստանային՝17 և կերային կուլտուրաների սերմերի՝ 8 նմուշներ.

- «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրով ձեռք է բերվել 4000 լիտր բրոդիֆակում թունանյութ: Ծրագրի շրջանակում հողօգտագործողներին տրամադրված թունանյութերի միջոցով կատարվել են 54 հազար հեկտարի վրա մկնանման կրծողների և 1450 հեկտարի վրա մոլախոտային բուսականության դեմ պայքարի աշխատանքներ, օգտագործվել է 5800 լ հերբիցիդ.

- անասնաբուժական հակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 6-ի թիվ 49 որոշմամբ սահմանված 14 հիվանդությունների դեմ (պաստերելյոզ, սալմոնելյոզ, ԼՏՖ -130, կատաղություն, բրադզոտ, լեպտոսպիրոզ և այլն) գնվել են կենսապատվաստուկներ և այլ անհրաժեշտ պարագաներ, որոնք բաշխվել են ըստ անասնաբուժական կայանների.

- անասնաբուժական և սանիտարական սպասարկման միջոցառումների իրականացման համար անասնաբուժական կայաններին և «Հանրապետական անասնաբուժական և սննդամթերքի փորձաքննությունների լաբորատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը պետական բյուջեից հատկացված միջոցներով իրականացվել են գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ 1.5 մլն կանխարգելիչ սրսկումներ և արյան քննություն՝ 130,852 նմուշ.

- «Խորհրդատվական և տպագրական ծառայությունների ու մոնիթորինգի կազմակերպում» ծրագրի շրջանակում անց են կացվել հողօգտագործողների վերապատրաստման մեկամսյա դասընթացներ: Խորհրդատվական ծառայությունների կազմակերպման և սեմինարների անցկացման նպատակով ձեռք են բերվել գրասենյակային նյութեր, մասնագիտական ամսագրեր, թերթեր.

- «Հանրապետական անասնաբուժական և սննդամթերքի փորձաքննությունների լաբորատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը իրականացրել է նաև հետազոտություններ՝ թունաբանական՝ 109 նմուշ, մանրէաբանական՝ 330 նմուշ, շիճուկաբանական՝ 29,491 նմուշ և մակաբուծական՝ 247 նմուշ.

-«Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումներ» ծրագրով իրականացվել են 215 գլուխ խոշոր եղջերավոր անասունների սերմնավորման աշխատանքներ.

- «Աջակցություն Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին» ծրագրի գումարը կազմել է 1.3 մլն ՀՀ դրամ:

<u>Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր՝</u>

- «Սերմերի և ազնվացեղ խոշոր եղջերավոր անասունների արժեքի մասնակի սուբսիդավորում» ծրագրով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գյուղատնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտներին աջակցելու նպատակով ձեռք է բերվել 16,820 կգ եգիպտացորենի սերմ, որն անհատույց տրամադրվել է հողօգտագործողներին, ձեռք է բերվել 121,000 կգ կարտոֆիլի տնկանյութ՝ արժեքի մասնակի սուբսիդավորմամբ: Ծրագրի շրջանակում բնակչությանը տրամադրվել է 127 գլուխ տոհմային ցուլիկներ՝ 30,844 կգ կենդանի քաշով, 84 գլուխ տոհմային ցածր մթերատու կովեր՝ 46,294 կգ կենդանի քաշով.

- «Ենթաշրջանային ծրագրերի իրականացում» միջոցառմամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- պտղատու այգիների հիմնադրման նպատակով ձեռք են բերվել 16,895 հատ տնկիներ և ըստ շրջանների կողմից ներկայացված հայտերի անհատույց տրամադրվել հողօգտագործողներին,

- ջրային համակարգի արդիականացման նպատակով ձեռք է բերվել և տրամադրվել հողօգտագործողներին 8181 գծ/մ պոլիէթիլենային խողովակներ,
- գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի արդիականացման, տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացման նպատակով ձեռք են բերվել Դրախտիկ համայնքի համար ինքնագնաց խոտհնձիչ և Տող համայնքի համար սկավառակային փոցխ,
- տրամադրվել են այլ ընթացիկ դրամաշնորհներ՝ Խնուշինակ համայնքի քյահրիզների, Սպիտակաշեն համայնքի Ավոյի աղբյուրի վերանորոգման և Մարիամաձոր համայնքի ոռոգման համակարգի բարելավման նպատակով,
- բազմամյա խոտաբույսերի 123.4 հա տարածության մշակության համար անհատույց տրամադրվել է 10,518 լիտր դիզելային վառելիք, ցանքսի համար կատարված աշխատանքների դիմաց վճարվել է աշխատավարձ.

- «Արտեզյան ջրհորների վերանորոգում» միջոցառման շրջանակում հանրապետության վեց համայնքներում իրականացվել են խորքային հորերի և ջրատարների կառուցման, վերանորոգման աշխատանքներ.

- «Անասնաբուժական սպասարկման կայանների կառուցում, վերանորոգում» ծրագրով ավարտվել են 2015 թվականին սկսված Մարտունու և Ասկերանի անասնաբուժական սպասարկման կայանների վարչական շենքերի կառուցապատման աշխատանքները և հանձնվել շահագործման.

- «Աջակցություն «Տոհմային կայան» փակ բաժնետիրական ընկերությանը» միջոցառման շրջանակում ընկերությանը ցուցաբերվել է աջակցություն 2016 թվականին ունեցած պարտավորությունների մարման նպատակով.

- «Փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցություն» միջոցառման շրջանակում հաստատված կարգի համաձայն հանրապետությունում գյուղատնտեսական մթերքներ վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին փոխհատուցվել է ավելացված արժեքի հարկի գումարը.

- «Թթայգիների զարգացման ծրագիր» միջոցառմամբ ձեռք են բերվել 20 000 հատ թթենու տնկիներ և անհատույց տրամադրվել այգեգործներին.

- «Բազմամյա կերային խոտաբույսերի մշակություն (կորնգան)» ծրագրով ձեռք է բերվել և տրամադրվել հողօգտագործողներին 132,000 կգ կորնգանի բարձրորակ սերմ, որով 2016 թվականին ցանվել է 1,000 հա տարածք.

- «Գարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության ծրագրերի խթանում» միջոցառման շրջանակում ձեռք են բերվել յուղատու մշակաբույսերի, հնդկացորենի, սորգոյի, արևածաղկի սերմեր և հանքային պարարտանյութեր ու տրամադրվել հողօգտագործողներին: Բանջարեղենի մշակությամբ զբաղվող անձանց անհատույց տրամադրվել են ֆինանսական միջոցներ: Ձեռք է բերվել արևածաղկի սերմ, անհատույց տրամադրվել հողօգտագործողներին, որով ցանվել է 1,016 հա հողատարածք: Մշակվել է 145 հա ծխախոտի տարածություն, ստացված 1,770.4 տոննա բերքի իրացման դիմաց տրամադրվել է լրավճար՝ 1 կիլոգրամի դիմաց 10 ՀՀ դրամ գումարի չափով.

- «Ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանում» ծրագրով ներդրվել են կաթիլային եղանակով՝ 32 հա և անձրևացման եղանակով՝ 11 հա ոռոգման համակարգեր.

- «Աճեցվող ակտիվների ձեռքբերում (թռչուն)» ծրագրով ձեռք են բերվել 9500 թև հավի ճտեր, որը անհատույց տրամադրվել է պատերազմական գործողություններից տուժած տնտեսություններին.

- «Կենտրոնացված կարգով գույքի և սարքավորումների ձեռքբերում» ծրագրով ձեռք են բերվել գրասենյակային գույք և վարչական սարքավորումներ և ըստ անհրաժեշտության տրամադրվել կառուցվածքային ստորաբաժանումներին.

- «Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ» ծրագրի շրջանակում «Հանրապետական անասնաբուժական և սննդամթերքի փորձաքննությունների լաբորատորիա» և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման կենտրոն» ՊՈԱԿ-ների միջոցով սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պատվերով իրականացվել են անհրաժեշտ լաբորատոր փորձաքննություններ.

- «Հանրապետական անասնաբուժական և սննդամթերքի փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ-ի համար կրեմատորիայի (դիակիզարանի) ձեռքբերում» ծրագրով նշված ընկերության համար ձեռք է բերվել կրեմատորիա:

<u>Ջրային ոլորտին աջակցության նպատակով 2016 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ ծրագրեր՝</u>

-«Խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում» ծրագրով սուբսիդիավորվել են ջրային ոլորտի մի շարք կազմակերպություններ: Ծրագրի շրջանակում շահագործող-ջրօգտագործողներին սուբսիդավորվել է մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը,

- «Ջրամբարների, ջրանցքների, ջրատարների վերանորոգում, վերականգնում և պահպանում» ծրագրով իրականացվել են գործող ջրանցքների, ջրատարների վերակառուցման, վերանորոգման, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Վարանդա գետի վրա վթարված ջրամբարի վերականգնման աշխատանքներ:

<u>Քաղաքաշինություն</u>

Քաղաքաշինությունը, լինելով տարածքային կազմակերպման և զարգացման, ազգաբնակչության արտադրողական ուժերի ու միջոցների տեղաբաշխման, բնակավայրերի ու միջբնակավայրային տարածքների կապերի, կառուցապատման ու հատակագծման հիմքը, ապահովում է տարածքների ծրագրավորման, ճարտարապետության, տարածքների ինժեներական պաշտպանվածության, բնակարանային-կոմունալ տնտեսության, տարածքների հատակագծման և տարաբնակեցման համակարգերի ձևավորման և դրանց նպատակային ուղղությունների ու գերակայությունների, շինարարության և շինինդուստրիայի բնագավառների գործունեությունը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեում 2016 թվականին կապիտալ ներդրումների պետական պատվերը կազմել է 11,295.7 մլն ՀՀ դրամ: 2016 թվականին կապիտալ ներդրումների պետական պատվերով կատարված աշխատանքների տվյալներն ըստ ճյուղերի հետևյալն են.

- բնակարանաշինություն, որն իր մեջ ընդգրկում է՝ զոհված ազատամարտիկների ընտանիքների, բազմազավակ ընտանիքների, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ սոցիալապես խոցելի խմբերին պատկանող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման աշխատանքներ,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների կառուցում և հիմնանորոգում,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակութային և մարզական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում,
- Հասարակական և վարչական նշանակության օբյեկտներ,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոճանապարհների պահպանում և շահագործում,
- Նախագծա-հետազոտատական աշխատանքների իրականացում,
- Ջրամատակարարման համակարգերի զարգացում,
- Ջեռուցման համակարգերի արդիականացում:

1. Զոհված ազատամարտիկների ընտանիքների բնակարանների վերանորոգման և կառուցման նպատակով ֆինանսավորվել է 348.1 մլն ՀՀ դրամ:

2. Այլ սոցիալական խմբերին պատկանող ընտանիքների բնակելի տների վերանորոգման և կառուցման նպատակով ֆինանսավորվել է 492.2 մլն ՀՀ դրամ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների իրականացման նպատակով ֆինանսավորվել է 588.9 մլն ՀՀ դրամ:

4. Ստեփանակերտ քաղաքում Ա. Մանուկյան փողոցի N120 հասցեում նախկին հանրակացարանի շենքը 50 բնակարանոց բնակելի շենքի վերակառուցման և Ասկերան քաղաքում բազմաբնակարան թվով 2 շենքի տանիքների վերանորոգման համար ֆինանսավորվել է 112.4 մլն ՀՀ դրամ:

Կրթության ոլորտում շարունակվել են աշխատանքները դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաների ուսումնադաստիարակչական պրոցեսը հարմարավետ շենքային պայմաններում կազմակերպելու ուղղությամբ: Այդ նպատակով 2016 թվականին կատարվել են 712.5 մլն ՀՀ դրամ կապիտալ ներդրումներ:

2016 թվականին կապիտալ ներդրումները մշակույթի և սպորտի բնագավառում կազմել են 265.7 մլն ՀՀ դրամ: Ավարտվել են Ստեփանակերտի Կ.Ալվարյան փողոցում գտնվող երաժշտական դպրոցի և Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի շենքերի վերանորոգման-վերակառուցման աշխատանքները, և այդ շենքերը հանձնվել են շահագործման:

Հասարակական և վարչական նշանակության օբյեկտներում կատարվել են 628.0 մլն ՀՀ դրամի չափով կառուցման և վերանորոգման աշխատանքներ:

2016 թվականին շարունակվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ համաֆինանսավորման սկզբունքով դպրոցաշինության, հասարակական նշանակության, առողջապահության, մշակույթի և ճանապարհաշինության ոլորտներում նախատեսված ծրագիրը: Ավարտին են հասցվել Ստեփանակերտի ուռուցքաբանական կենտրոնի կառուցման աշխատանքները և ընթացքի մեջ են Մարտունու շրջանի Սոս գյուղի 300 տեղանոց միջնակարգ դպրոցի, սպորտդահլիճի, Սարգսաշեն գյուղի համայնքային կենտրոնի, Ասկերանի շրջանի Իվանյան գյուղի 250 տեղանոց հանդիսությունների տան և համայնքային կենտրոնի, Հադրութի շրջանի Թաղասեռ, Տումի և Քյուրաթաղ գյուղերում 150 տեղանոց հանդիսությունների տան և համայնքային կենտրոնների կառուցման աշխատանքները:

Հանրապետության համայնքներին ու բնակիչներին տների ու տանիքների վերանորոգման նպատակով շինանյութերի և գյուղամիջյան ճանապարհների սալապատման համար խորանարդ քարերի տրամադրման նպատակով ֆինանսավորվել է 909.3 մլն ՀՀ դրամ:

Առողջապահության ոլորտում կատարված կապիտալ ներդրումների ծավալը կազմել է 166.6 մլն ՀՀ դրամ:

Առողջապահության ոլորտում ներդրումներ են կատարվել նաև արտաբյուջետային միջոցներից: Ընթացքում են Ստեփանակերտ քաղաքում հանրապետական ծննդատան և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի շրջանային հիվանդանոցի նոր շենքերի կառուցման աշխատանքերը:

2016 թվականին կապիտալ ներդրումների ծրագրով Ստեփանակերտ քաղաքում կառուցման, վերանորոգման և վերակառուցման աշխատանքների իրականացման համար ֆինանսավորվել է 1,041.0 մլն ՀՀ դրամ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ավտոճանապարհների վերակառուցման, վերանորոգման և պահպանման նպատակով հաշվետու տարում ֆինանսավորվել է 2,688.8 մլն ՀՀ դրամ:

Առանձնակի ուշադրություն է դարձվել նախագծա - նախահաշվային փաստաթղթերի մշակման որակի բարձրացման և կատարելագործման վրա, այն համապատասխանեցնելով նախագծման ժամանակակից պահանջներին, որի կատարման համար ֆինանսավորվել է 323.4 մլն ՀՀ դրամ:

Ջրամատակարարման համակարգերի զարգացման նպատակով 2016 թվականին ներդրվել է 933.8 մլն ՀՀ դրամ:

Ջեռուցման համակարգերի արդիականացման նպատակով 2016 թվականին ներդրվել է 94.9 մլն ՀՀ դրամ:

Ընդհանուր առմամբ 2016 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կապիտալ շինարարության համար հատկացվել է 12,557.2 մլն ՀՀ դրամ գումար:

Պետական բյուջեից բացի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվել են նաև 4,525.4 մլն ՀՀ դրամի շինմոնտաժային աշխատանքներ, որից ֆինանսավորվել է 3,838.4 մլն ՀՀ դրամը: Նշված միջոցների հաշվին ավարտին են հասցվել Սոթք-Հաթերք 110/35/10ԿՎ էլեկտրագծի և ենթակայանների կառուցման I, II, III փուլերի աշխատանքները:

<u>Զբոսաշրջություն</u>

Չնայած 2016 թվականի ապրիլ ամսին Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմական գործողությունների պատճառով գրանցվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այցելած զբոսաշրջիկների թվաքանակի 40 տոկոս նվազում, այնուամենայնիվ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ հնարավոր դարձավ մեղմել նվազումը՝ հասցնելով այն 16 տոկոսի:

2016 թվականին միջազգային զբոսաշրջիկների ընդհանուր ծախսերը երկրում կազմել են շուրջ 5.6 մլն ԱՄՆ դոլար:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրության ծառայության տվյալներով 2016 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում հաշվառված 44 հյուրանոցային տնտեսության օբյեկտների ծառայություններից օգտվել են շուրջ 26 հազար զբոսաշրջիկներ՝ Հայաստանից ու արտերկրից: Գրանցվել է Հայաստանի Հանրապետությունից Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն այցելող զբոսաշրջիկների թվաքանակի էական աճ: Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում դեպի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն 2016 թվականի ընթացքում իրացվել են ավելի քան 1,100 զբոսաշրջային փաթեթներ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1,000 փաթեթի դիմաց:

Հաշվետու տարում ապահովվել է Արցախի մասնակցությունը արտերկրում և Հայաստանի Հանրապետությունում կայացած հետևյալ միջոցառումներին.

- «Մոսկվայի տուրիզմ և ճամփորդություն» /MITT-Moscow Tourism and Travel 2016/ միջազգային զբոսաշրջային ցուցահանդես,
- «Միջազգային զբոսաշրջային շուկա. Բեռլին» /ITB Berlin-International Travel Borsa 2016/ միջազգային զբոսաշրջային ցուցահանդես,
- «Ինտուր Էքսպո-2016» /InTour Expo 2016/ միջազգային զբոսաշրջային ցուցահանդես (քաղաք Երևան),
- «Արտադրված է Հայաստանում» ցուցահանդես (քաղաք Երևան),
- «Երկրները մեկ հարկի տակ» ցուցահանդես-ֆորում (քաղաք Երևան),
- «Արենի» գինու փառատոն» (գյուղ Արենի):

Հայ Դատի Եվրոպայի գրասենյակի հետ համագործակցության շնորհիվ 2016 թվականի նոյեմբերի 17-ից 19-ը Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաքում կազմակերպվել է «Արցախ. Թաքնված գանձ» զբոսաշրջային ֆոտոցուցահանդես: Ցուցահանդեսի ընթացքում կազմակերպվել է նաև Արցախի խոհանոցին նվիրված շնորհանդես, որին հրավիրված էին Բելգիայի և Եվրամիության քաղաքական տարբեր շրջանակներ, զբոսաշրջային ընկերություններ, հայ համայնքի ներկայացուցիչներ:

2016 թվականի սեպտեմբերի 17-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Տող գյուղում կազմակերպվել և անց է կացվել Արցախյան գինու երրորդ փառատոնը: Փառատոնը հյուրընկալել է հազարավոր այցելուների և մասնակիցների Հայաստանից և արտերկրից:

2016 թվականի ընթացքում՝ համաձայն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջների հաշվառվել է 3 զբոսաշրջային տուրօպերատոր և 2 զբոսավարի տրամադրվել է լիցենզիա:

Տարեվերջի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործում են 44 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ՝ 1,281 ննջատեղերով:

Պատմամշակութային հուշարձանների պահպանման և վերականգնման ոլորտ

Հուշարձանների պահպանության և ուսումնասիրման բնագավառում իրականցվել են ներքոհիշյալ աշխատանքները.

- հնագիտական պեղումներ են իրականացվել «Տիգրանակերտ» և «Նոր Կարմիրավան» հնավայրերում,
- մաքրման աշխատանքներ են իրականացվել «Հունոտի կիրճ» բնապատմական արգելոցի տարածքում գտնվող մի քանի շինությունների ներսում և «Տիգրանակերտի» պատմամշակութային արգելոցի տարածքում:

Կազմակերպվել է արցախյան գինեգործության ավանդույթներին նվիրված ցուցահանդես:

Տարվա ընթացքում, համաձայն ծրագրի, կազմվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի հուշարձանների պետական ցուցակը:

Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների եվ պատմական միջավայրի վերականգնման եվ օգտագործման բնագավառում 2016 թվականին.

- իրականացվել են աշխատանքներ Տողի Մելիքական ապարանքի հնագիտական պեղումների արդյունքում ի հայտ եկած շինությունների և գոյություն ունեցող շենքերի կոնսերվացման ուղղությամբ, կառուցվել են հենապատեր: Աշխատանքները կշարունակվեն 2017 թվականին,

- մշակվել է Ասկերանի բերդի նախագիծը, իսկ հիմնական աշխատանքները նախատեսված է կատարել 2017 թվականին,

- կատարվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սխտորաշենի Տնջրի ծառի ցանկապատման աշխատանքներ:

Շարունակվում է մասնավոր հատվածի կողմից հուշարձանների վերականգնման համար կատարվող ներդրումների բարի ավանդույթը: Բարերարների ներդրումների շնորհիվ տարվա ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- կատարվել են Մուշկապատ գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգնման աշխատանքներ, որոնց ֆինանսավորումը իրականացվել է «Արևելյան Պատմական Ժառանգության Վերածնունդ» Բարեգործական Հիմնադրամի կողմից: Աշխատանքների մեծ մասը ավարտված է: Հուշարձանի վերականգնման աշխատանքները ավարտին կհասցվեն 2017 թվականի գարնանը:

- «Արևելյան Պատմական Ժառանգության Վերածնունդ» Բարեգործական Հիմնադրամի կողմից նաև ֆինանսավորվել է Շուշիի Վերին մզկիթի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

- Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի միջնորդությամբ և բարերարների միջոցներով վերականգնվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի Դադիվանքի գլխավոր մուտքն ու շրջակայքում գտնվող չորս մատուռներից երկուսը:

- աջակցություն է ցուցաբերվել Ասկերանի շրջանի Կարմիր գյուղ համայնքի տարածքում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցու վերականգնման և կոնսերվացման աշխատանքներին:

<u>Էներգետիկա</u>

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ գործում են 14 հիդրոէլեկտրակայաններ, այդ թվում՝ Սարսանգ ՀԷԿ՝ 50 ՄՎտ դրվածքային հզորությամբ և 13 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ 44.1 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ:

2016 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվել է 296.4 մլն կՎտ·ժ էլեկտրաէներգիա, որը 2015 թվականի համեմատ (222.3 մլն կՎտ·ժ) աճել է 74.1 մլն կՎտ·ժ-ով կամ 33.4 տոկոսով: «ԱրցախՀԷԿ» ԲԲԸ-ում արտադրվել է 191.8 մլն կՎտ•ժ (արտադրության ծավալը աճել է 51.5 մլն կՎտ·ժ կամ 36.7տոկոսով), որից 104.3 մլն կՎտ·ժ-ը արտադրվել է «Սարսանգ» ՀԷԿ-ում և 87.5 մլն կՎտ·ժ-ը՝ «ԱրցախՀԷԿ» ԲԲԸ փոքր հիդրոէլեկտրակայաններում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Սյունիք» և այլ փոքր հիդրոէլեկտրակայաններում արտադրվել է 104.6 մլն կՎտ·ժ էլեկտրաէներգիա, որը 2015 թվականի համեմատ աճել է 22.6 մլն կՎտ·ժ կամ 27.5 տոկոսով:

2016 թվականին հանրապետությունում էլեկտրաէներգիայի սպառումը կազմել է 299.0 մլն կՎտ·ժ՝ աճելով 6.2 մլն կՎտ·ժ կամ 2.1 տոկոսով:

Էլեկտրաէներգիայի սպառման ընդհանուր ծավալից գերակշռող մասը կազմել է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությունից և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փոքր հիդրոէլեկտրակայաններից գնված էլեկտրաէներգիան՝ 296.4 մլն կՎտ•ժ կամ 99.1 տոկոսը (2015 թվականի՝ 75.9 տոկոսը), իսկ «Հայաստանի էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունից գնված էլեկտրաէներգիան կազմել է 2.6 մլն կՎտ·ժ (2015 թվականի՝ 70.5 մլն կՎտ•ժ) կամ 0.9 տոկոսը (2015 թվականի՝ 24.1 տոկոսը):

2016 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էլեկտրաէներգետիկայի համակարգում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- էլեկտրաֆիկացվել է Քաշաթաղի շրջանի Կերեն բնակավայրը, Ասկերանի շրջանի Պատարա բնակավայրի տեղամասում տեղակայված ամառային ճամբարը,

- քաղաքացիների դիմումներով էլեկտրամատակարարման համար ներդրվել է 14,5 մլն ՀՀ դրամ՝ էլեկտրաֆիկացվել է 22 բնակելի տուն,

- վերակառուցվել են 15.2 կմ 10 կՎ և 21.5 կմ 0.4 կՎ օդային գծեր, «Կովսական-Երիցվանք» 35 կվ օդային գիծը՝ 2.5 կմ երկարությամբ, «Ստեփանակերտ» 35 կվ օդային գծի 24 հատ հենասյուների հողանցումը, 35/10 կՎ «Վրեժավան» էլեկտրաենթակայանում 1.8 ՄՎԱ տրանսֆորմատորը փոխարինվել է 2.5 ՄՎԱ-ով, 110/35/10 կՎ «Ստեփանակերտ» էլեկտրաենթակայանում 25ՄՎԱ տրանսֆորմատորը փոխարինվել է 40 ՄՎԱ-ով, «Սոթք-Հաթերք»

110 կՎ օդային էլեկտրահաղորդման գծի կառուցման համար 2016 թվականին ներդրվել է 2,798.5 մլն ՀՀ դրամ:

Գազաֆիկացում

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 12 քաղաքներից գազաֆիկացված են՝ 8-ը, իսկ 289 գյուղերից՝ 78-ը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության մասով հաշվառված 40,372 պոտենցիալ բաժանորդներից փաստացի գազամատակարարվել են 28,291-ը (2015 թվականին՝ 27,772) կամ 70 տոկոսը: Հիմնարկ-ձեռնարկությունների և այլ գազասպառողների թիվը կազմում է 994: 2016 թվականին հանրապետություն է ներմուծվել 39.1 մլն $մ^3$ բնական գազ, որը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 0.3 մլն $մ^3$ կամ 0.7 տոկոսով: Գնման միջին սակագինը կազմել է 74.6 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Բնական գազի իրացումը կազմել է 37.2 մլն $մ^3$, ինչը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 0.6 տոկոսով, տեխնոլոգիական կորուստները կազմել են 4.8 տոկոս՝ նվազելով 0.11 տոկոսային կետով: Վաճառքի միջին սակագինը կազմել է 111.02 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: 2016 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գազամատակարարման համակարգում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- վերանորոգվել է շուրջ 2 կմ միջին ճնշման գազամուղ՝ փոխադրվելով ստորգետնյա,
- քաղաքացիների գազաֆիկացման դիմումների համար ներդրվել է 5.2 մլն ՀՀ դրամ՝ գազաֆիկացվել է 13 բնակելի տուն:

Տրանսպորտային ենթակառուցվածքներ

Հանրապետության կանոնավոր ուղևորափոխադրումները իրականացնում են 37 փոխադրողներ, որոնցից իրավաբանական անձինք՝ 8, անհատ ձեռնարկատերեր՝ 29: Ավտոբուսային երթուղիների քանակը 97 (ներառյալ Հայաստանի Հանրապետության փոխադրողների կողմից սպասարկվող երթուղիներ), ավտոբուսների քանակը՝ 135, չի սպասարկվում 10 երթուղի: Այդ երթուղիների չսպասարկման պատճառներն են՝ ճանապարհների անբավարար վիճակը, ցածր ուղևորահոսքն ու հետևաբար ոչ եկամտաբեր լինելը: Ստեփանակերտի ներքաղաքային երթուղիների քանակը 9 է, իսկ ավտոբուսների քանակը՝ 45:

2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում տրամադրվել են մարդատար-տաքսի ավտոմոբիլներով (մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով) ուղևորափոխադրումների կազմակերպման 70 լիցենզիա և 80 լիցենզիայի ներդիրներ, ինչի արդյունքում տարվա ընթացքում պետբյուջե է գանձվել 6 759. 2 հազ դրամ: Լիցենզավորված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի (ֆիզիկական անձանց) թիվը կազմում է 253, որոնց շարժակազմերում ընգրկված են թվով 243 տրանսպորտային միջոցներ:

2016 թվականի ընթացքում արձանագրվել է խախտման 42 դեպք, հարուցվել է 42 վարչական վարույթ, որից ներքաղաքային ուղևորափոխադրումներում՝ 25, տաքսամոտորային ուղևորափոխադրումներում՝ 8, միջպետական, միջշրջանային և ներշրջանային ուղևորափոխադրումներում՝ 9, որի արդյունքում նշանակվել է 518.0 հազ դրամ վարչական տուգանք:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել, վերագրանցվել և գրանցումից հանվել է թվով 42 միավոր շինարարական, ճանապարհաշինարարական և այլ ինքնագնաց մեքենամեխանիզմներ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքում տրամադրվել է 28 տեխնիկական վկայագիր և 27 պետհամարանիշ, ինչի արդյունքում պետական բյուջե է մուտքագրվել 301.0 հազ դրամ պետական տուրք:

Հեռահաղորդակցություն

2016 թվականին կապի բնագավառի հիմնախնդիրներն են եղել՝ գիտատեխնիկական առաջընթացի ապահովումը, միջպետական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը, իրավական ակտերի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, էլեկտրոնային հաղորդակցության և ցանկացած այլ ցանցերի և կապի այլ միջոցների գործունեության համակարգումը:

Փոստային կապ. 2016 թվականին աճել է ավանդական փոստային ծառայություններից օգտվողների թիվը, բնականաբար նաև՝ մեր հանրապետությունից արտերկիր առաքվող և ստացվող փոստային առաքանու՝ նամակների և ծանրոցների ծավալները: Հետևողական աշխատանքներ են տարվում փոստային վճարման պետական նշանների՝ նամականիշերի

թողարկման ավելացման ու տեսականու հարստացման, արտերկրում ապրող ֆիլատելիստների ֆինանսական ներգրավվածության ապահովման ուղղությամբ: 2016 թվականին թողարկվել է 14 անուն-նամականիշ՝ 250.6 հազ. հատ ընդհանուր տպաքանակով և մեկ գեղաթերթիկ՝ 7 հազ. հատ տպաքանակով:

Հեռախոսակապ. Ներկայումս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 244 համայնքներում գործում է 2G կապ, իսկ 19 համայնքներում՝ 3G (շարժական ինտերնետ) կապ: 2016 թվականին «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ի կողմից իրականացված աշխատանքների շնորհիվ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բջջային կապի սփռվածությունը կազմել է 98.0 տոկոս, իսկ ինտերնետ ծառայությանը՝ 97.5 տոկոս:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 208 քաղաքներում և գյուղերում ինտերնետ կապը հասանելի է: Ինտերնետ ծառայությունից օգտվողների թիվը կազմում է 15,200 բաժանորդ:

Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ Արցախի բնակչությունը հնարավորություն է ստացել օգտվելու բջջային ձայնային համացանց ծառայությունից: Հանրապետության տարածքում համացանցի ծավալը հասցվել է մինչև 10 Գբիթ/վրկ., ինչը հնարավորություն է տալիս ծառայության տվյալների ավելի արագ և մեծ ծավալով փոխանակելու հնարավորություն:

Հեռուստատեսություն և ռադիո. «Արցախկապ» ՓԲԸ-ն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ողջ տարածքում մատուցում է անալոգային ու թվային հեռուստահեռարձակում և ռադիոհեռարձակում: Ներկա դրությամբ վճարովի բաժանորդների թիվը կազմում է 7,137: 2016 թվականին ըստ ծրագրի շարունակվել են վերերկրյա թվային հեռուստատեսության (DVB-S2) հաղորդակների տեղադրումը հանրապետության բոլոր շրջաններում: Ավարտվել է DVB-T2 հեռարձակիչ կայանների տեղադրումը: DVB-T2 ձևաչափի թվային ազդանշանի սփռվածությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կազմում է 82.2 տոկոս: Համաձայն «Արցախկապ» ՓԲԸ կողմից կատարված չափագրումների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակեցված համայնքներում հեռուստառադիոհեռարձակման ապահովվածությունը տոկոսային հարաբերությամբ արտացոլվում է հետևյալ կերպ.

- թվային հեռուստահեռարձակման ազդանշանները հասանելի են բնակչության 98.0 տոկոսի համար, իսկ ծածկույթը ապահովվում է 71.3 տոկոս բնակավայրերում,
- ռադիոազդանշանները հասանելի են բնակչության 97.3 տոկոսի համար, իսկ ծածկույթը ապահովվում է 80.1 տոկոս բնակավայրերում (ներառված չեն «Փեյս» ՍՊԸ տվյալները):

«Արցախկապ» ՓԲԸ 2016 թվականի հիմնական աշխատանքներն ուղղվել են առկա անալոգային և թվային հեռուստահաղորդիչ կայաններում տեղադրված սարքավորումների շահագործմանն ու սպասարկմանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 729 որոշմամբ հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռադիոհեռուստատեսության բնագավառում հեռարձակման զարգացման և թվային համակարգի ներդրման պետական ծրագրի իրականացմանը: Ռադիոծածկույթից դուրս գտնվող և սահմանամերձ համայնքները սոցիալական փաթեթի հեռուստածրագրերով ապահովելու նպատակով՝ հաշվետու տարում շարունակվել են DVB-S2 ձևաչափի վերահաղորդիչ կայանների տեղադրումը: 2016 թվականի նոյեմբեր ամսում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալապես անապահով բնակչության համար ձեռք են բերվել և անվճար տրամադրվել 2,000 հատ թվային DVB-T2 կցորդներ: Ներկայումս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական այս խմբերի հաշվառումը շարունակվում է՝ կապված նոր խմբաքանակի թվային կցորդների ձեռք բերման և նրանց տրամադրման հետ:

<u>Բնապահպանություն և բնօգտագործում</u>

Բնապահպանության և բնօգտագործման ոլորտում 2016 թվականին իրականացվող քաղաքականությունն ուղղված էր շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի վրա վնասակար ներգործությունների կանխարգելմանը կամ նվազեցմանը, բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործմանն ու վերականգնմանը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ռազմավարական նշանակության ծրագրերով նախատեսված բնապահպանության ոլորտի գծով գերակա խնդիրների և միջոցառումների կատարման ապահովմանը:

Բնապահպանության և բնօգտագործման բնագավառում առկա խնդիրների լուծման և բնագավառի պետական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել են համապատասխան միջոցառումներ ուղղված՝

- ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի արդիականացմանը և կատարելագործմանը,
- էկոլոգիական տեղեկատվական քաղաքականության ձևավորմանը ու իրականացմանը, բնապահպանական կրթության և դաստիարակության որակի բարելավման, հասարակության էկոլոգիական գիտակցության ու մտածելակերպի կայացման և էկոլոգիական խնդիրների մասին իրազեկության մակարդակի բարձրացման համար նախադրյալների ստեղծմանը,
- ընդերքի պահպանման, հաշվառման և գրանցման, դրա վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տրամադրման ապահովմանը,
- տնտեսական ծրագրերի գծով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական համակարգի ձևավորմանը,
- տեսչական վերահսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը
- բնության և շրջակա միջավայրի պահպանման նկատմամբ վերահսկողության առավել բարձր չափանիշների սահմանմանը,
- բնական ռեսուրսների օգտագործման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը,
- անտառային կենսաբազմազանության պահպանությանը և կայուն օգտագործման անհրաժեշտությամբ պայմանավորված անտառային էկոհամակարգերի բնապահպանական միջոցառումների իրականացմանը:

Բնական աճի աջակցման, բնական աճի ուսումնասիրության, անտառային ճանապարհների կառուցապատման ու վերանորոգման և բնափայտի մթերման տարեկան չափաքանակի ապահովման ուղղությամբ աշխատանքներ են իրականացվել անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրման և անտառօգտագործման նպատակով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշմամբ 2016 թվականի համար հաստատված 11,500 խտացված մ^3 գործափայտի և 150,000 խտացված մ^3 վառելափայտի մթերման համար անտառօգտագործողներին տրամադրված թույլտվությունների հիման վրա «Արցախանտառ» ՊՈԱԿ-ի և անտառօգտագործողների միջև կնքվել են բնափայտի մթերման պայմանագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում մթերվել է 10,772 խտացված մ^3 գործափայտ և 63,938 խտացված մ^3 վառելափայտ, թափուկից՝ 11,192 դարսված մ^3 վառելափայտ:

Կենդանական աշխարհի պահպանության և կառավարման բնագավառում 2016 թվականին որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների որսաշրջանում՝ որսորդներին և ձկնորսներին տրամադրվել են 217 թույլտվություններ, այդ թվում՝ 199 սիրողական որսի, իսկ 18-ը՝ ձկնորսություն իրականացնելու համար:

2016 թվականին ուսումնասիրվել են ներկայացված հանքարդյունահանման և երկրաբանական ուսումնասիրության թույլտվություններ ստանալու հայտերը, տեղում ուսումնասիրվել է ընդերքի 12 տեղամաս, որի արդյունքում տրամադրվել է 12 հանքարդյունահանման թույլտվություններ, երկարաձգվել են 2 հանքարդյունահանման թույլտվության գործունեության ժամկետներ, դադարեցվել են՝ 5:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության բնագավառում բնապահպանական փորձաքննության ու ուսումնասիրության են ներկայացվել 36 ծրագրեր, որոնցից 26-ին տրվել է դրական փորձաքննական եզրակացություն, 10 հայտ, որոնք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ ենթակա չէին բնապահպանական փորձաքննության, նույնպես բավարարվել է:

Բնապահպանական փորձաքննության իրականացման դիմաց պետական բյուջե է մուտքագրվել 3.1 մլն ՀՀ դրամ:

Պետական ընդերքաբանական փորձաքնություն իրականացնելու նպատակով տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված դիմումների հիման վրա իրականացվել է ոչ մետաղական օգտակար հանածոների պաշարների հաստատման 12 ընդերքաբանական փորձաքննություն:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում ուսումնասիրվել է 17 ջրառի օբյեկտ, և համապատասխան քննարկման արդյունքում տրամադրվել 15 ջրօգտագործման թույլտվություններ, երկարաձգվել են 14 ջրօգտագործման թույլտվությունների ժամկետներ:

Հաշվետու ժամանակահատվածում հանրապետության տարածքում բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կողմից կատարվել են 15 ստուգայցեր՝ ըստ «Բնապահպանական վերահսկողության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջների:

Բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կողմից իրականացված ստուգումների և ստուգայցերի ընթացքում հայտնաբերվել ու օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացքավորվել է 67 տարբեր տեսակի իրավախախտումներ:

<u>Սոցիալական ապահովություն և ժողովրդագրություն</u>

2016 թվականին իրականացված սոցիալական քաղաքականության հիմնական նպատակներն էին ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, կենսաթոշակային և զբաղվածության համակարգերի կատարելագործումը, տարեցների, հաշմանդամների, զոհված զինծառայողների ընտանիքների, բազմազավակ ընտանիքների ու երեխաների հիմնահարցերի լուծումը:

Ուշադրության կենտրոնում են մնում մատուցվող ծառայությունների հասցեականության ու մատչելիության բարելավման, համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցության ընդլայնման, տեղեկատվական բազաների արդիականացման հարցերը:

Ժողովրդագրական քաղաքականություն

Ժողովրդագրական իրավիճակի բարելավման համատեքստում 2016 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- շարունակվել է «Նորաստեղծ ընտանիքներին ամուսնության միանվագ նպաստի տրամադրում» ծրագրի շրջանակներում տրվող նպաստի հատկացումը ամուսիններից յուրաքանչյուրին՝ 150.0 հազ. դրամի չափով: Տարվա ընթացքում ծրագրից օգտվել են 1,619 ամուսնացած անձինք (2015 թվականի՝ 1,961) և ընդհանուր ծախսը կազմել է 242.9 մլն ՀՀ դրամ: 2016 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ՔԿԱԳ մարմիններում գրանցվել է 934 ամուսնություն (2015 թվականի՝ 1,186):

- ծնելիության և բազմազավակության խթանման ծրագրի շրջանակներում շարունակվել է երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստների տրամադրումը ու 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի անվամբ նպատակային ժամկետային ավանդների բացումը:

Հաշվետու ժամանակաշրջանում 2,641 երեխայի ծննդյան կապակցությամբ հատկացվել է 759.6 մլն ՀՀ դրամի չափով ծննդյան միանվագ նպաստ.

-1,859 չաշխատող կանանց տրամադրվել է հղիության և ծննդաբերության նպաստ՝ յուրաքանչյուրին 253.0 հազ. դրամ,

- շարունակվել են 6 և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների համար նոր բնակելի տների կառուցման աշխատանքները, որն իրականացվում է կապիտալ ներդրումների ծրագրով: 2016 թվականին հաշվառվել են 37 ընտանիքներ:

2016 թվականին մշակվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2017-2019 թվականների ծրագիրն ու միջոցառումների ցանկը: Ակնկալվում է նախատեսված միջոցառումների միջոցով կանխել ժողովրդագրական բացասական միտումների զարգացումը և նպաստել ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը:

Ընտանիքի և երեխաների հիմնահարցեր

«Պետական նպաստներ» ծրագրով ծախսը 2016 թվականին կազմել է 2,725.0 մլն ՀՀ դրամ (2015 թվականի՝ 2,654.2 մլն ՀՀ դրամ), իսկ նպաստառուների թվաքանակը կազմել է 18,968 մարդ:

Իրականացվել է առանց ծնողական խնամքի մնացած 31 երեխաների կենտրոնացված հաշվառում:

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվառվել են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 13 անձինք, որոնց պետք է հատկացվեն բնակելի տներ:

Գործող երեխաների խնամքի և պաշտպանության երկու գիշերօթիկ հաստատություններում 2016 թվականի ընթացքում խնամք են ստացել առանց ծնողական խնամքի մնացած, ինչպես նաև

սոցիալապես անապահով ընտանիքների 3 տասնյակից ավելի երեխաներ, ինչի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից ծախսվել է 91.8 մլն ՀՀ դրամ:

2016 թվականին գիշերօթիկ հաստատություններում խնամվող, սովորող շուրջ 3 տասնյակ երեխաների հատկացվել են, ըստ 7-12 և 13-18 տարիքային խմբերի, համապատասխանաբար 2,000 և 3,000 դրամի չափով գրպանի մանր ծախսեր: Ծրագրի ընդհանուր ծախսը կազմել է 1.1 մլն ՀՀ դրամ:

Կենսաթոշակային ապահովություն և սոցիալական ապահովագրություն

Կենսաթոշակային ապահովության բնագավառում 2016 թվականի գերակա ուղղությունը բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն էր:

Տարեսկզբից ուժի մեջ է մտել կենսաթոշակների վճարման նոր կարգը, համաձայն որի՝ կենսաթոշակները սկսել են վճարվել և՛ կանխիկ, և՛ անկանխիկ (կենսաթոշակի գումարը անձի քարտային հաշվի համարին փոխանցելու միջոցով) եղանակներով՝ ըստ կենսաթոշակառուի դիմումի:

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ շուրջ 1,400 անձի կենսաթոշակ արդեն վճարվում է անկանխիկ եղանակով:

Շարունակվել են կենսաթոշակառուների հաշվառման նոր՝ «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքները, որի համատեքստում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սկսել է առցանց եղանակով տվյալներ ստանալ համապատասխան գերատեսչություններից՝ եկամտային հարկի անձնավորված հաշվառման էլեկտրոնային շտեմարանից և բնակչության պետական ռեգիստրից, ինչի շնորհիվ ապահովվել է քաղաքացիների անձնագրային տվյալների (այդ թվում՝ հաշվառման) ու աշխատանքային ստաժի վերաբերյալ հավաքագրվող տեղեկատվության հավաստիությունը:

Ընդհանուր առմամբ կենսաթոշակների, պատվովճարների, ամենամսյա դրամական օգնությունների և պարգևավճարների վճարման նպատակով պետական բյուջեից ծախսվել է 12,549.9 մլն ՀՀ դրամ, որից կենսաթոշակներին է ուղղվել 11,687.4 մլն ՀՀ դրամ, Հայրենական մեծ պատերազմի վետերանների պատվովճարներին՝ 42.7 մլն ՀՀ դրամ, ամենամսյա դրամական օգնություններին և պարգևավճարներին՝ 751.6 մլն ՀՀ դրամ:

Տարիքային աշխատանքային կենսաթոշակի միջին չափը 2016 թվականի արդյունքներով կազմել է շուրջ 45,150 դրամ, որը 2015 թվականի համեմատ գրեթե չի փոխվել: Սոցիալական կենսաթոշակի միջին չափը 2016 թվականի արդյունքներով կազմել է 19,700 դրամ՝ 2015 թվականի 19,960 դրամի դիմաց:

Աշխատանքային կենսաթոշակ ստացողների թիվը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 20,665 մարդ, սոցիալական կենսաթոշակ ստացողների թիվը՝ 2,469: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ նշված կենսաթոշակառուների թիվը համապատասխանաբար կազմել է 20,786 և 2,440:

Աշխատանք և զբաղվածություն

2016 թվականի ընթացքում որպես աշխատանք փնտրող հաշվառված են 1,403 մարդ, որից 1,368-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Գործազուրկների թվաքանակը 2015 թվականի համեմատ աճել է 11.1 տոկոսով:

2016 թվականին աշխատանքի և զբաղվածության գործակալությունում հաշվառված գործազուրկներից աշխատանքի են տեղավորվել թվով 80 հոգի, որից 6 հոգի գործակալության կողմից իրականացված ծրագրերի արդյունքում: Գործակալություն այցելած անձանց տրվել են խորհրդատվություն՝ «Զբաղվածության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, զբաղվածության ծրագրերի, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման մասին:

Հաշվառված գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող թվով 32 անձանց համար իրականացվել են «Կիրառական հոգեբանություն և սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ մասնագիտական ուսուցման դասընթացներ, որոնցից մի մասին ուսուցանող կազմակերպությունը պարտավորվել է 2017 թվականին տեղավորել աշխատանքի:

Նշված ժամանակահատվածում իրականացվել են հանդիպումներ թվով 700 գործատուների հետ, նրանց ներկայացնելով իրականացվող ծրագրերը, ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա համագործակցության համար:

Հանդիպման արդյունքում գործատուների կողմից ներկայացվել են 181 թափուր աշխատատեղեր:

Պարբերաբար թարմացվում են գործատուների կողմից ներկայացվող իրենց մոտ առկա թափուր աշխատատեղերի մասին տվյալների մուտքագրումը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքէջում:

Պետական բյուջեով զբաղվածության ծրագրերի իրականացման համար նախատեսվել էր 68.3 մլն ՀՀ դրամ, որից 21.5 մլն ՀՀ դրամ՝ գործազուրկների ուսուցման, գործազուրկ հաշմանդամների աշխատանքի տեղավորման և աշխատավարձի փոխհատուցման նպատակով:

Սոցիալական աջակցություն

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բնագավառում 2016 թվականին իրականացվող ծրագրերն ուղղված են եղել հաշմանդամների սոցիալական վիճակի բարելավմանը, հասարակությանը նրանց ինտեգրմանը, հավասար (մատչելի) պայմանների ապահովմանը, բժշկական, սոցիալական և հոգեբանական վերականգնմանն ուղղված աշխատանքներին: Մասնավորապես.

- 42 հաշմանդամի համար անվճար պատրաստվել է ոտքի և տարբեր տեսակի պրոթեզներ, վերանորոգվել է 79 պրոթեզ, 31 կանանց հատկացվել է կրծքագեղձի պրոթեզ, 15 քաղաքացու հատկացվել է քայլակ, 204 հաշմանդամի՝ հենակներ և 117 քաղաքացու՝ ձեռնափայտեր: Հաշմանդամներին կողմից անվճար հատկացվել են 59 թիկնասայլակներ: Լսողական խանգարումներ ունեցող 153 քաղաքացիների հատկացվել են լսողական սարքեր:

-պետական բյուջեի միջոցների հաշվին կազմակերպվել է առանձին սոցիալական խմբերին պատկանող քաղաքացիների առողջարանային բուժում, ինչպես նաև նրանց տրամադրվել են հանգստյան տների ուղեգրեր: Այս ծրագրից օգտվել է ավելի քան 21 քաղաքացի, ծախսը կազմել է 3.1 մլն ՀՀ դրամ,

- 18 մանկական ուղեղային կաթվածով տառապող հաշմանդամ երեխաներ իրենց ծնողների հետ միասին առողջարանային բուժում են ստացել «Արարատ մոր և մանկան առողջարան» փակ բաժնետիրական ընկերության առողջարանում, որի համար ծախսվել է 9.4 մլն ՀՀ դրամ,

-հիշարժան օրերի կապակցությամբ միանվագ դրամական օգնություն է տրամադրվել Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին և մասնակիցներին, Արցախի ազատագրական պատերազմում հաշմանդամ դարձած և զոհված զինծառայողների ընտանիքներին: Ծրագրի ընդհանուր ծախսը 2016 թվականին կազմել է 213.0 մլն ՀՀ դրամ,

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին հատկացվել է 68.1 մլն ՀՀ դրամի չափով միանվագ ապահովագրական վճար:

Վարժական հավաքների և զինծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության ու գերեզմանների բարեկարգման համար տրամադրվել է 112.0 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում:

Շարունակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ 2 և ավելի զոհ տված ընտանիքներին ամենամսյա դրամական օժանդակության տրամադրման ծրագիրը: 2016 թվականի ծրագրի ծախսը կազմել է 32.7 մլն ՀՀ դրամ:

2016 թվականին ապրիլյան գործողությունների հետևանքով տարհանված և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարբեր բնակավայրերում ժամանակավոր բնակեցված քաղաքացիներին պետական բյուջեի, արտաբյուջետային միջոցների և հումանիտար օգնության հաշվին հատկացվել է սննդամթերք, հագուստեղեն, սանիտարահիգիենիկ պարագաներ և այլ տիպի օգնություն:

Նույն ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ալաշան տեղամասում բնակեցված թալիշցիների համար ձեռք են բերվել առաջին անհրաժեշտության կենցաղային պարագաներ, մահճակալներ, սպիտակեղեն, կահույք, սառնարաններ, լվացքի մեքենաներ և այլն, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարբեր բնակավայրերում բնակեցված բոլոր թալիշցիներին հատկացվել է միանվագ ֆինանսական օգնություն:

Դրամական և նյութական հարցերով ստացված դիմումներից 1,372 քաղաքացու հատկացվել է 55.5 մլն ՀՀ դրամ ֆինանսական օգնություն, 1,100 քաղաքացու՝ 10.7 մլն ՀՀ դրամի նյութական օգնություն:

«Ստեփանակերտի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում 2016 թվականին խնամք են ստացել 7 տասնյակից ավել տարեց և հաշմանդամ քաղաքացիներ, ինչի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից ծախսվել է 113.0 մլն ՀՀ դրամ:

Միայնակ տարեցների խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրումն իրականացվել է «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» պետական ոչ կառավարչական հիմնարկի միջոցով, որը տնային պայմաններում ապահովել է 200 միայնակ տարեցների և հաշմանդամների խնամքը:

Բարեգործական ծրագրեր

2016 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից ընդունվել են 134 որոշումներ, որոնցից 42-ը՝ ապրանքների բաշխման մասին:

2016 թվականի ընթացքում ներմուծվել են 493.4 մլն ՀՀ դրամ արժողությամբ ապրանքներ: Ներմուծված ապրանքների շուրջ 48.5 տոկոսը առողջապահության բնագավառի ապրանքներ են (դեղորայք, բժշկական սարքեր և սարքավորումներ, բժշկական ավտոմեքենա, բժշկական տարբեր ապրանքներ)՝ 239.6 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

<u>Առողջապահություն</u>

Բնակչության առողջության պահպանումը պետության կողմից դիտարկվում է որպես ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներից մեկը:

2016 թվականին առողջապահության ոլորտի գործունեության քաղաքականության հիմքում դրված են եղել բնակչության առողջության պահպանման և բարելավման հստակորեն սահմանված հետևյալ հիմնական արժեքները՝ բուժօգնության տրամադրման հավասարություն, արդարություն, մատչելիություն, բժշկական օգնության որակի ապահովում, ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում:

Իրականացվող բարեփոխումներն անդրադառնում են համակարգի կազմակերպչական ու կառուցվածքային վերափոխումներին, օրենսդրական դաշտի բարելավմանը, ոլորտի օպտիմալացմանը և արդիականացմանը, առողջապահության ֆինանսական համակարգի և բժշկական օգնության կազմակերպման կատարելագործմանը:

Առողջապահության ոլորտում պահպանվել են պետության կողմից իրականացվող քաղաքականության ներքոհիշյալ գերակա ուղղությունները՝ մատչելի և որակյալ բժշկական օգնության ապահովումը, հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության, առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության պահպանման, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովումը, բժշկական օգնության որակի բարելավումը, հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ բուժօգնության և դեղերով ապահովումը, տեղեկատվական համակարգի կատարելագործումը, պետական ֆինանսական միջոցների արդյունավետ, նպատակային օգտագործումը:

Ելնելով առողջապահության ոլորտի ծրագրային գերակայություններից 2016 թվականին առողջապահական պետական նպատակային ծրագրեր են հանդիսացել.

- բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման ծրագիրը,
- բնակչության առողջության առաջնային պահպանման ծրագիրը,
- մոր և մանկան առողջության պահպանման ծրագիրը,
- բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ծրագիրը,
- սոցիալական և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարի ծրագիրը:

Ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում շարունակել է գերակա համարվել բնակչության առողջության առաջնային պահպանման ապահովումը: Իրականացվել են առաջնային բուժօգնության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով գյուղական բնակչության կարիքներին:

Առաջնային բուժօգնության օղակի աշխատանքները լիարժեք իրականացնելու համար կազմակերպվել են բազմաթիվ այցեր տարբեր շրջաններ և գյուղեր՝ տեղում ծանոթանալով առկա խնդիրներին և հնարավորության սահմաններում տալով համապատասխան լուծումներ:

Առողջության առաջնային պահպանման /ԱԱՊ/ բժիշկները ամիսը մեկ անգամ, իսկ նեղ մասնագետները /վիրաբույժ, ակնաբույժ, նյարդաբան, քիթ-կոկորդ-ականջաբան, սրտաբան/՝ տարեկան երկու անգամ, համաձայն տվյալ բժշկական կազմակերպության տնօրենի հրամանով հաստատված ժամանակացույցի, այցելություններ են կատարել կցագրված գյուղական համայնքներ և տեղում կատարել բնակչության ընդունելություն:

2016 թվականին շարունակվել է առաջնային բուժօգնության օղակի դերի բարձրացումը, կանխարգելիչ ուղղվածության ուժեղացումը, ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության կողմից իրականացնող բուժօգնության տեսակների և դրա տեսակարար կշռի ավելացումը: Բուժհիմնարկներում բնակչության բուժօգնության և սպասարկման, ախտորոշման որակի բարձրացման նպատակով ձեռք են բերվել վերջին սերնդի համակարգչային շերտագրիչ, ստացիոնար և շարժական թվային ֆլյուորոգրաֆներ, ժամանակակից ռենտգեն-սարք, որը հնարավորություն է տալիս հեռակառավարման միջոցով կատարել բոլոր նպատակային ռենտգեն նկարահանումները, անդրադարձային տեսագրիչ /էխոսկաներ/: Միաժամանակ կորոնարոգրաֆիայի և ստենտավորման անցկացման ծառայություններին զուգահեռ ներդրվել են էնդովասկուլյար միջամտություններ, որոնք բնակչությանը հնարավորություն են տալիս օգտվելու անոթային և կարդիովիրաբուժական անհետաձգելի միջամտություններից: Ներդրվել և գործում են օրթեզավորման և կորսետավորման ծառայություններ մանկական և մեծահասակ բնակչության համար:

«Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության պահպանում» ծրագրով իրականացվել են բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում, հանրային առողջության պահպանման նպատակով փորձագիտական հետազոտությունների անցկացում, ուսումնասիրություններ, լաբորատոր և գործիքային հետազոտություններ: Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը իրականացրել է հանրապետության տարածքում գործող ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների /անկախ սեփականության ձևից/ կողմից սանիտարահամաճարակաբանական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների կազմակերպում, ինչպես նաև բնակչության առողջության նկատմամբ արտաքին աշխարհի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության կանխարգելում: Ուշադրության կենտրոնում էր ջրամատակարարման և ջրօգտագործման անվտանգության ապահովման խնդիրը, բնակելի տարածքների սանիտարական վիճակը՝ համաձայն գործող սանիտարական նորմերի և կանոնների:

2016 թվականին շարունակվել է նաև մյուս առողջապահական պետական նպատակային ծրագրերի իրականացումը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեից առողջապահական համակարգին հատկացված միջոցների արդյունավետությունը բարձրացնելու և ծախսերը վերահսկելու նպատակով ստուգումներ են կատարվել բուժհիմնարկներում և վերջիններիս կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացվող ամսական և եռամսյակային հաշվետվությունների մասով:

Դեղային և տեխնոլոգիական քաղաքականությունը ուղղված է եղել դրանց մատչելիության, անվտանգության և կիրառման արդյունավետության բարձրացմանը: Հանրապետության բնակչությանը որակյալ դեղերով ապահովումը կանոնակարգելու նպատակով 2016 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

«Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռք բերում» ծրագրով նախատեսված գումարներով ձեռք է բերվել դեղորայք, որը տրամադրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող սոցիալական խմբերի եւ հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» N555 որոշմամբ նախատեսված անձանց: Բուժհիմնարկների բյուջեներում նույն նպատակով հատկացված գումարներով ձեռք բերված դեղերի թվաքանակը մասամբ համալրել է հիվանդների պահանջարկը: Շարունակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգով սոցիալապես անապահով քաղաքացիներին որոշ վիրահատությունների համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու ծրագիրը:

Շարունակվել է բուժկետերի ապահովումը դեղանյութերով եւ բժշկական պարագաներով ինչպես՝ պետական բյուջեով նախատեսված գումարների, այնպես էլ տարբեր բարեգործական կազմակերպությունների միջոցով:

2016 թվականին աշխատանքներ են տարվել բժիշկների և բուժքույրերի վերապատրաստման ուղղությամբ: Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ընդունելությանը մասնակցած դիմորդներից 24-ը ընդունվել են «Ընդհանուր բժշկության» ֆակուլտետ, պետական պատվերի շրջանակներում:

Պետական պատվերով նույն համալսարանի մագիստրատուրա են ընդունվել բակալավրիատի արցախցի 2 շրջանավարտ:

Առողջապահության համակարգը անհրաժեշտ նեղ մասնագետներով համալրելու նպատակով Երևանի Պետական Բժշկական Համալսարանի կլինիկական օդինատուրայում պետական պատվերի շրջանակներում ուսուցանելու նպատակով ուղեգրվել է 9 բժիշկ՝ տարբեր մասնագիտություններով:

Շարունակվել են աշխատանքները բժշկական մասնագետների հետդիպլոմային շարունակական կրթության ուղղությամբ: Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան երկրներում վերապատաստման դասընթացներ են անցել 42 բժիշկ: Վերապատրաստումները հիմնականում անց են կացվել Ամերիկյան հայ օգնության ֆոնդի, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առաջատար բժշկական հիմնարկներում:

«Հայաստանի մանուկների հիմնադրամի» մասնագետների կողմից «Արևիկ» մանկական բուժմիավորում ՓԲԸ բազայի վրա Ստեփանակերտ քաղաքի և Ասկերանի շրջանի բուժքույրերի համար կազմակերպվել են առաջին բուժօգնության դասընթացներ, որին մասնակցել են 38 բուժաշխատող: Մասնակիցներից 18-ը վերապատրաստվել են որպես դասընթացավարներ, որոնք հետագայում կկազմակերպեն համապատասխան դասընթացներ համակարգի բուժքույրերի համար:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության համակարգի բժշկական հիմնարկները 2016 թվականին համալրվել են 20 բժիշկներով, որոնցից 7-ը՝ Հայաստանի Հանրապետությունից տեղափոխված:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի թիվ 319-ն որոշմամբ սահմանված «Այլ վայր ուղեգրվող բժշկին ֆինանսական աջակցության ցուցաբերում» ծրագրի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մասնագիտությամբ աշխատելու համար Հայաստանի Հանրապետությունից տեղափոխված 9 բժշկի աշխատավարձին սահմանվել է հավելավճար և տրվել է բնակվարձի փոխհատուցում: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին ֆինանսական աջակցություն է ստացել 54 բժիշկ:

<u>Կրթություն և գիտություն</u>

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում պետական կրթական քաղաքականությունն իրականացվում է կրթական բոլոր աստիճաններում, և ապահովվում է նրանց ներդաշնակ գործունեությունը: Այդ քաղաքականության հիմքում զուգակցվում են ազգային և համաշխարհային /միջազգային/ նորարարությունները, ինչն առավել բարձր որակ ապահովելու նպատակ է հետապնդում:

Հանրակրթության ոլորտում աշխատանքներ են տարվել ուսման որակի բարձրացման ուղղությամբ և այդ նպատակով հետևողական միջոցներ են ձեռնարկվել դպրոցները դասագրքերով ապահովման, տեղեկատվական տեխնոլոգիաների համալրման և հնարավորությունների օգտագործման, դպրոցաշինության և գույքով ապահովման, ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման, սովորողների գիտելիքների և կարողությունների զարգացման նպատակով առաջավոր փորձի ներդրման, առարկայական օլիմպիադաների ու տարբեր մրցույթների, ռազմահայրենասիրական և այլ բնույթի միջոցառումների անցկացման ու այլ ուղղություններով:

2016 թվականին շարունակվել է պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններ և դպրոցներին կից նախադպրոցական խմբեր ստեղծելու պետական քաղաքականությունը: Երեխաներին տարրական դպրոցին նախապատրաստելու համար ապահովվել է դպրոցներին կից նախադպրոցական խմբերի գործունեությունը՝ մեծացնելով

նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը: Գործել է 53 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որից 51 մանկապարտեզ (38-ը՝ պետական) և 65 նախադպրոցական խմբեր:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցականներին տրամադրվել են դասագրքեր՝ անվճար հիմունքներով, իսկ ուսուցիչներին՝ այդ դասագրքերին համապատասխան՝ ուսուցչի ձեռնարկներ:

Կրթության բովանդակային բարեփոխումները կախված են ուսումնական հաստատությունների շենքային պայմաններից: 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների և արտաբյուջետային միջոցների հաշվին վերակառուցվել ու շահագործման են հանձնվել հինգ դպրոցական և վեց մանկապարտեզի շենքեր: Իրականացվել են դպրոցական շենքերի ընթացիկ նորոգումներ:

Սովորողների ունակությունների ու կարողությունների բացահայտման նպատակով անցկացվել են առարկայական օլիմպիադաներ, շարադրությունների և այլ ստեղծագործությունների մրցույթներ, գեղանկարչական ցուցահանդեսներ, ռազմամարզական մրցումներ, որին նպաստում են ուսումնական հաստատություններում ու 31 արտադպրոցական հիմնարկներում կազմակերպվող խմբակային պարապմունքները, որոնցում ընդգրկված են 9196 սովորողներ:

Ուշադրության կենտրոնում են գտնվել երեխաների ամառային հանգստի կազմակերպման աշխատանքները: Ծմակահողի, ՀՅԴ երիտասարդական միության, «Հայկի Սերունդ», Հայ ավետարանչական ընկերակցության, Հայաստանի Հանրապետության և Հունաստանի ճամբարներում ընդգրկվել են 3,160 դպրոցականներ:

2016 թվականին համալրվել է ուսումնական հաստատությունների համակարգչային համակարգը. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից տրամադրվել են 40 համակարգիչներ, և 110-ը՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից:

2016 թվականին իրականացվել են 737 մանկավարժական աշխատողների վերապատրաստման դասընթացներ:

Մասնագիտական կրթության ոլորտում հետևողական աշխատանքներ են տարվել արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնագիտությունների հստակեցման, շենքային պայմանների բարելավման, ուսումնանյութական հագեցվածության համալրման, արհեստավոր և կրտսեր մասնագետների պատրաստման հիմնախնդիրների իրականացման ուղղությամբ: Նորակառույց հանրակացարանով ապահովվել են Շուշիի «Եզնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարանի ուսանողները և Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսանողների մի մասը:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում կարևորվել են մասնագետների պատրաստման գործում պատասխանատվության բարձրացման, ուսումնական գործընթացը պահանջվող մակարդակով կազմակերպելու, կարգապահության ամրապնդման, կրեդիտային համակարգի պահանջների ապահովման և այլ խնդիրներ: Բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում ներդրվել է մասնագիտությունների և որակավորումների նորացված համակարգը:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում շարունակվում է առաջնահերթ խնդիր դիտվել ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին: Այս կապակցությամբ շարունակվում է նորմատիվային այնպիսի ակտերի մշակման գործընթացը, որը միտված է նպաստելու բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում իրականացվող քաղաքականությանը: 2016 թվականին սեպտեմբերի 1-ից գործում է Շուշիի տեխնոլոգիական համալսարանը: Ընդլայնվել է հանրապետության բուհերի համագործակցությունը Հայաստանի Հանրապետության և արտերկրի բուհերի հետ:

2016 թվականին շարունակվել է արտերկրի բուհերում և Հայաստանի Հանրապետության բուհերում սովորողների ուսման ծախսերի փոխհատուցումը:

Գիտություն

Գիտահետազոտական աշխատանքների որակի բարձրացման և գիտական կադրերի պատրաստման նպատակով Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գործուն աջակցությամբ և պետական բյուջեով հատկացված միջոցների ներդրմամբ կենսաքիմիական ուղղություն ունեցող երեք լաբորատորիաներում գիտական աշխատողների և լաբորատորիայի վարիչների ներգրավմամբ իրականացվել են գիտական հետազոտություններ 6

թեմաների գծով, որոնք ֆինանսավորվել են Հայաստանի Հանրապետության Գիտության պետական կոմիտեի կողմից, իսկ Արցախի գիտական կենտրոնի անմիջական ղեկավարությամբ իրականացվում են գյուղատնտեսության, բույսերի հետազոտման, ընդերքի հետազոտման, ինչպես նաև Արցախի մանկավարժության, բարբառի, բանահյուսության և պատմության ուսումնասիրման բնագավառներին վերաբերող գիտահետազոտական աշխատանքներ, որոնցում ընդգրկված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պետական բուհերի ու համապատասխան կառույցների գիտաշխատողները: 2016 թվականին Արցախի գիտական կենտրոնի ղեկավարությամբ իրականացվել են 9 թեմաներ, որոնցից 4-ի կատարումն ավարտվել է, և հայտարարված մրցույթի արդյունքում հաստատվել են գիտական 5 նոր թեմաներ:

Բարելավվել են Արցախի գիտական կենտրոնի շենքային պայմանները և նախատեսվում է ստեղծել նոր լաբորատորիաներ:

Սպորտ

2016 թվականին զգալի աշխատանքներ են կատարվել հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման ու զարգացման, բարձրակարգ մարզիկների պատրաստման, մարզական ֆեդերացիաների և կազմակերպությունների, մանկապատանեկան մարզադպրոցների աշխատանքային գործունեությունը բարելավելու ուղղությամբ: Բարեգործական միջոցներով մարզական նոր մարզասրահներ են կառուցվել Ստեփանակերտում, Մարտունու շրջանի Ճարտար և Գիշի համայնքներում:

2016 թվականին ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում կազմակերպվել և անց են կացվել 101 միջոցառումներ՝ 5206 մարզիկների մասնակցությամբ, իսկ մարզական ֆեդերացիաների կողմից՝ 17 հանրապետական մարզական միջոցառումներ՝ 3242 մարզիկների մասնակցությամբ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 12 լավագույն ընտանիք մասնակցել են Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար կազմակերպված մրցույթին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1288 մարզիկներ մասնակցել են Հայաստանի Հանրապետության, Եվրոպայի, աշխարհի առաջնություններին, միջազգային մրցաշարերին և գավաթի խաղարկություններին: Ընդհանուր առմամբ 2016 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարզիկները գրավել են 152՝ առաջին, 126՝ երկրորդ, 143՝ երրորդ մրցանակային տեղեր: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության թիմերը մասնակցել են նաև Իրանի Իսլամական Հանրապետությունում կազմակերպված համահայկական խաղերին՝ գրավելով առաջնակարգ տեղեր:

2016 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործել են 19 մարզական ֆեդերացիաներ, որոնց հետ կնքվել են պայմանագրեր պետական բյուջեից ֆինանսավորվելու համար: Հատկացված գումարների նպատակային օգտագործումը մշտապես վերահսկվում է ոլորտը կարգավորող մարմինների կողմից:

Մշակույթ և երիտասարդություն

2016 թվականին մշակութային պետական քաղաքականությունը նպատակաուղղված էր ոլորտի զարգացման կայունության ապահովմանը, մշակույթի՝ որպես զարգացման միջոցի հասարակական գիտակցման արմատավորմանը, Արցախի մշակութային ճանաչելիության մեծացմանը:

Մշակութային ժառանգության ուսումնասիրման, պահպանման ու հանրահռչակման ուղղությամբ աշխատանքներ են տարվել Շուշիի պատմության թանգարանի ֆոնդի համալրման և ցուցադրության արդիականացման, Բերձորի պատմաերկրագիտական թանգարանի գործունեության ակտիվացման, ինչպես նաև Արցախի պատմաերկրագիտական թանգարանի ժամանակավոր տեղափոխման ուղղությամբ: Ապահովվել է թանգարանների աշխատողների մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում՝ Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի, Թանգարանային կրթության կենտրոնի կողմից կազմակերպված դասընթացներին: Հաշվետու տարում թանգարաններում և Ստեփանակերտի պատկերասրահում կազմակերպվել են 6 տասնյակ ցուցահանդեսներ, 37 դաս-դասախոսություններ և 130-ից ավելի այլ միջոցառումներ /համերգներ, վարպետության դասեր, մրցույթներ, էքսկուրսիաներ/: Տարվա կտրվածքով թանգարանների և Ստեփանակերտի պատկերասրահի կողմից սպասարկվել է շուրջ 30 հազար այցելու: Երևանի Մատենադարանի հետ համագործակցությամբ ապահովվել է Արցախի

Մատենադարանի՝ «Գանձասար» գիտա-մշակութային կենտրոնի գործունեությունը, աջակցություն է ցուցաբերվել Շուշիի գորգերի մասնավոր թանգարանին՝ բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով: Նվիրատվությունների միջոցով համալրվել են Շուշիի կերպարվեստի և երկրաբանության թանգարանների ֆոնդերը: 2016 թվականի ընթացքում համալրվել են նաև Արցախի գրադարանների ֆոնդերը, նախապատրաստական աշխատանքներ են սկսվել Հովհ. Թումանյանի անվան մանկական հանրապետական գրադարանի պայմանների և ֆոնդի արդիականացման ուղղությամբ:

Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության կարևորագույն ծրագրերից էր Արցախում ազգային նվագարանների նվագախմբի ստեղծումը: Կարևոր միջոցառումներից էր «Գութան» Հայաստանի ազգագրական երգի-պարի փառատոնի անցկացումն Արցախում: Տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են ազգագրական պարերի ուսուցման դասեր: Երևանում կազմակերպվել է Արցախի ազգագրությանը նվիրված ցուցահանդես: Շարունակել է աջակցությունը արհեստագործ վարպետներին՝ արհեստագործական ստուդիաների գործունեության ապահովման և ցուցահանդես-վաճառքների կազմակերպման միջոցով:

2016 թվականին մշակութային կրթության ոլորտում բացվել են արվեստի դպրոցների 4 մասնաճյուղեր, ինչի շնորհիվ ստեղծագործական զարգացման հնարավորություններ են ստեղծվել գյուղական բնակավայրերի ևս 150 երեխաների համար: 2016 թվականին շահագործման հանձնված Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի նորակառույց շենքի համար ձեռք է բերվել 17 դաշնամուր:

Հաշվետու տարում արտաբյուջետային միջոցներով ստեղծվել է նոր մեդիաարտադրանք՝ տեսահոլովակներ, որոնք լայն ճանաչում են գտել համացանցում: Տարվա ընթացքում աջակցություն է ցուցաբերվել Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական և Շուշիի Մ. Խանդամիրյանի անվան պետական թատրոններին, «Թատրոն» ստեղծագործական միավորում հասարակական կազմակերպությանը՝ նոր բեմադրությունների համար, պետական համույթներին՝ նոր համերգային ծրագրերի համար, ինչպես նաև ստեղծագործող անհատների՝ մշակութային նոր նախաձեռնությունների ու ծրագրերի իրագործման նպատակով:

Շրջաններում մշակութային կյանքի ակտիվացմանն էին ուղղված **«Մշակութային խաչմերուկ» հանրապետական չորրորդ մրցույթ-փառատոնը,** որի նախընտրական փուլին մասնակցել է 53 գյուղական համայնք՝ 366 մասնակիցներով. հանրապետական փուլ է անցել 32 համայնք՝ 193 մասնակիցներով: Մրցանակային ֆոնդը՝ 6 605.0 հազ. դրամ, բաշխվել է մրցույթ-փառատոնի 58 մրցանակակիրների (անհատներ, խմբեր) միջև: 2016-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակութային կոլեկտիվների կողմից շուրջ 77 համերգներ և ներկայացումներ են իրականացվել հանրապետության տարբեր բնակավայրերում:

Մշակութային երկխոսություն և համագործակցություն ուղղությամբ 2016 թվականին կայացել է Հ. Գյուրջյանի անվան քանդակագործության 4-րդ միջազգային սիմպոզիումը՝ ԱՄՆ-ից, Չինաստանից, Լեհաստանից, Ռուսաստանից, Հայաստանի Հանրապետությունից, Արցախից քանդակագործների մասնակցությամբ: Կազմակերպվել է «ԱրցախէթնոՖեստ» միջազգային առաջին փառատոնը՝ Ֆրանսիայից, Ռումինիայից, Մոլդովայից, Հարավային Կորեայից, Սիրիայից, Վրաստանից, Հայաստանի Հանրապետությունից և Արցախից ազգային ավանդական խոհանոցը ներկայացնող վարպետների մասնակցությամբ:

Արտերկրից ժամանած անհատ կատարողների և մշակութային խմբերի, հայ և օտարերկրացի արվեստագետների մասնակցությամբ տասնյակ միջոցառումներ են կազմակերպվել Արցախում, այդ թվում՝ «Հիշիր այս ակնթարթը» միջազգային երաժշտական փառատոնային համերգը՝ նվիրված Մ. Թարիվերդիևի 85-ամյակին, «Сегодня ночью» ռուսաստանյան ռոք-խմբի համերգը, Իրանի Իսլամական Հանրապետության և Արցախի Հանրապետության երաժիշտ-կատարողների համատեղ համերգները: Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության հետ համագործակցության շրջանակներում, «Իմ Հայաստան» համահայկական 3-րդ փառատոնի համերգներով Արցախում հանդես են եկել սփյուռքի 10 պարախմբեր:

Հաշվետու ժամանակաշրջանում ապահովվել է արցախցի արվեստագետների մասնակցությունը միջազգային և հայաստանյան մի շարք մրցույթների՝ արձանագրելով հաջողություններ այդ հարթակներում: Մասնավորապես, արցախցի երիտասարդ դաշնակահարուհի Անահիտ Առուշանյանը մասնակցել է Բուլղարիայում կայացած «Օրփեոսի

ժառանգները» երիտասարդ դաշնակահարների միջազգային մրցույթին՝ արժանանալով «Գրան պրի» մրցանակի, Հ. Գյուրջյանի անվան արվեստի դպրոցի աշակերտները մասնակցել են Սոչիում կայացած «Ակվա տեմպ» 13-րդ միջազգային խորեոգրաֆիկ մրցույթ-փառատոնին՝ նույնպես արժանանալով «Գրան պրի»-ի: Ապահովվել է Արցախի շնորհաշատ 16 երեխաների մասնակցությունը Գյումրիում կայացած երաժիշտ-կատարողների «Վերածնունդ» միջազգային 8-րդ մրցույթ-փառատոնին. 5 հոգի արժանացել է 1-ին մրցանակի, 8-ը զբաղեցրել են 2-րդ մրցանակային տեղը, 1-ը՝ 3-րդ տեղը: Արցախի ազգային նվագարանների նորաստեղծ նվագախումբը մասնակցել է Երևանում Թաթուլ Ալթունյանի ծննդյան 115-ամյակին նվիրված ժողովրդական նվագարանների անսամբլների հանրապետական 1-ին մրցույթ-փառատոնին՝ արժանանալով 1-ին մրցանակի: Մանկական «Նոր ալիք» մրցույթում «Արցախի ձայն» նախագծի մասնակից Միքայել Գրիգորյանը գրավել է 2-րդ տեղը: Ապահովվել է «Մենք ենք, մեր սարերը» երգի-պարի պետական համույթի մասնակցությունը ՌԴ Կրասնոդար քաղաքում կայացած «Հայաստանի ձայներ» փառատոնին, ինչպես նաև համերգները Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության մի շարք քաղաքներում:

Հաշվետու ժամանակաշրջանում **երիտասարդության հարցերի ոլորտում՝** երիտասարդության ինքնիրացման պայմանների ու երաշխիքների ապահովման, զբաղվածության հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ, **«Մասնագիտության ճիշտ կողմնորոշում»** միջոցառման շրջանակներում կազմակերպվել են ավարտական դասարանների աշակերտների ճանաչողական այցեր՝ Դիլիջանի միջազգային դպրոց, Շուշիի Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական ուսումնարան, կազմակերպվել է Արցախում գործող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի, «Synergy systems», «Oteqsis», «Instigeit system» ՍՊԸ-ների, Շուշիի Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական ուսումնարանի ներկայացուցիչների հանդիպում Մարտակերտ քաղաքի հիմնական դպրոցների 8-9-րդ դասարանների աշակերտների հետ: Ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակներում իրականացվել են «Զբոսավարների դպրոց», «Անհատի առաջնորդական հմտությունների զարգացում» և «Ռազմավարության պլանավորում» դասընթաց-սեմինարները: Արցախի երիտասարդության կյանքի լուսաբանման, երիտասարդության իրազեկման նպատակով իրականացվել են artsakhyouth.am կայքէջի ստեղծման, տեղեկատվության հավաքագրման և համակարգման աշխատանքներ: Բանակ-հասարակություն կապի ամրապնդման նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի մի շարք զորամասերում կազմակերպվել են ինտելեկտուալ, ազգային ավանդական խաղեր, ազգային պարերի բաց դասեր, համերգային ծրագրեր, ««Skype» զինծառայողների համար» ծրագիր: Տարվա ընթացքում կազմակերպվել են «Ճանաչենք մեր երկիրը» խորագրով հայրենաճանաչողական երիտասարդական արշավներ դեպի Դադիվանքի վանական համալիր, Սուրբ Աստվածածին վանական համալիր: Կազմակերպվել է «Ննջեցեք խաղաղությամբ: Ձեր գործը շարունակում ենք» խորագրի ներքո երիտասարդական ակցիան, որի շրջանակներում արցախցի երիտասարդները այցելել են ապրիլյան պատերազմի զոհերի շիրիմներին՝ Արցախում, Գորիսում, Սիսիանում, Երևանում, Սարդարապատում և Գյումրիում:

«Հոգևոր անվտանգություն» թեմայով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 26 համայնքների երիտասարդների համար կազմակերպվել են դասախոսություններ, այցեր և ուխտագնացություններ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր շրջաններում: Արցախի երիտասարդների և Հայաստանի Հանրապետությունից Արցախ ժամանած ուխտավորների մասնակցությամբ 18 այցեր և ուխտագնացություններ են կազմակերպվել Արցախում գործող 14 եկեղեցիներ:

Երիտասարդության շրջանում ընտանեկան արժեքների քարոզչության նպատակով կազմակերպվել է «Ընտանեկան ճամբար-2016»-ը՝ 25 ընտանիքների մասնակցությամբ: Միջոցառմանը մրցանակային տեղ զբաղեցրած ընտանիքների համար կազմակերպվել է էքսկուրսիա՝ Տաթևի վանք, ապահովվել է առաջին տեղ գրաված ընտանիքի՝ Ռուսաստանի Դաշնության Սոչի մեկնման ծախսերի փոխհատուցումը: **Երիտասարդության ազատ ժամանցի կազմակերպման նպատակով** կազմակերպվել են համերգներ, ծանոթության երեկոներ, ազգային ավանդական խաղեր:

«Երիտասարդական քաղաքացիական և հասարակական նախաձեռնություններին աջակցություն, երիտասարդական կառույցների գործունեության ակտիվացում» ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է Արցախում գործող հասարակական կազմակերպությունների 5

ծրագիր: Արցախի համայնքների զարգացման գործում երիտասարդների մասնակցության խթանման, միջհամայնքային և ներհամայնքային համագործակցության ակտիվացման ու զարգացման նպատակով իրականացվել է «Արցախի երիտֆորում» միջոցառումը հանրապետության բոլոր շրջաններից 135 երիտասարդների մասնակցությամբ:

Երիտասարդության խոցելի խմբերին հասարակությանն ինտեգրման նպատակով աջակցություն է ցուցաբերվել Ստեփանակերտի Ք. Քոքսի անվան վերականգնողական կենտրոնին՝ «Հաշմանդամ երիտասարդների համար ճանաչողական էքսկուրսիա դեպի Հայաստանի պատմամշակութային վայրեր» ծրագրի իրականացման նպատակով: Ապահովվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խուլերի միության 6 անդամների մասնակցությունը Հայաստանի Հանրապետության Սիսիան քաղաքում «Խարիսխ» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «Բիզնես կարողությունների զարգացում» թեմայով դասընթացներին:

«Հայաստանի Հանրապետության և արտերկրի հետ համագործակցություն, համատեղ միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում ապահովվել է Արցախի երիտասարդների մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված դասընթացներին, սեմինարներին, ինտելեկտուալ խաղերին, երիտասարդական հավաքներին, համաժողովներին և այլն: Կազմակերպվել են ուսանողների փոխայցելություններ:

<u>Պետական գույքի կառավարում և մասնավորեցում</u>

Հաշվետու տարում շարունակել է իրականացվել պետական գույքի կառավարման՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունը:

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվառված է պետական, պետական մասնակցությամբ ընկերությունների սեփականություն հանդիսացող 3,352 միավոր անշարժ գույք: 98 միավոր անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է պետական սեփականության իրավունքի գրանցման աշխատանքներ: Ստեղծված անշարժ գույքի գործերը տեսաներածվել և մուտքագրվել են էլեկտրոնային բազա:

Շարունակվել են հանրապետության համայնքների գծային ենթակառուցվածքների հաշվառման և գրանցման աշխատանքները, մասնավորապես 2016 թվականի ընթացքում գրանցվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Գետավան գյուղի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Նորագյուղ գյուղի ջրամատակարարման համակարգերի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Սարսանգի ջրամբարի նկատմամբ պետության սեփականության իրավունքը:

Պետական գույքի մասնավորեցման և օտարման գործընթացի շրջանակներում իրականացված միջոցառումների և կատարված աշխատանքների արդյունքում ծրագրով նախատեսված 20.0 մլն ՀՀ դրամի դիմաց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե մուտքագրվել է 47.2 մլն ՀՀ դրամ, այդ թվում՝ գույքի և հողամասի մասնավորեցումից՝ 7.6 մլն ՀՀ դրամ, օտարումից՝ 39.6 մլն ՀՀ դրամ: Վարձակալության դիմաց պետական բյուջեի մուտքերը կազմել են 540.0 հազ ՀՀ դրամ:

Փակ բաժնետիրական ընկերությունների գույքի օտարումից մուտքագրվել և օրենսդրությամբ սահմանված կարգով վերջիններիս է փոխանցվել 4.4 մլն ՀՀ դրամ:

<u>Անշարժ գույքի կադաստր</u>

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 22-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված «Գեոդեզիայի, քարտեզագրման, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» ՊՈԱԿ-ի ծառայությունների գնման գծով պետական պատվերի ծրագիրը հաստատելու մասին» N 62-Ա որոշմամբ հաստատված միջոցառումների շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Ստեփանակերտ քաղաքի կադաստրային քարտեզագրում՝ կատարվել է 151,3 հեկտար նախապատրաստական և դաշտային աշխատանքներ, գումարը՝ 3.4 մլն ՀՀ դրամ.
- նոր կադաստրային քարտեզագրում բնակավայրի սահմաններում՝ 200 հեկտար, հիմնականում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանում, գումարը՝ 6.5 մլն ՀՀ դրամ.

- տեղագրական հանույթ՝ հիմնականում հանութագրվել են հանքավայրերի տարածքները, գումարը՝ 2.7 մլն ՀՀ դրամ.

- նոր կադաստրային քարտեզագրում (գյուղնշանակության հողեր)՝ Քաշաթաղի շրջանում քարտեզագրվել է 4,699 հեկտար վարելահող, գումարը՝ 6.0 մլն ՀՀ դրամ.

- 2000-2004 թվականներին կատարված կադաստրային քարտեզագրման ուղղման աշխատանքներ՝ քարտեզագրվել է Հադրութի շրջանի Դրախտիկ համայնքը /1,457 միավոր անշարժ գույք/, գումարը՝ 4.5 մլն ՀՀ դրամ.

- հողային հաշվետվությունների կազմում՝ հողային հաշվեկշիռ է կազմվել 16 համայնքի համար, գումարը՝ 3.8 մլն ՀՀ դրամ.

- պետական և համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի հաշվառում, գումարը՝ 2.1 մլն ՀՀ դրամ.

- ոռոգվող հողերի գույքագրում՝ գույքագրվել է 3,000 հեկտար հողատարածք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանում, գումարը՝ 15.0 մլն ՀՀ դրամ.

- անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումների տեղեկագրերի տպագրություն՝ 2015 թվականի տարեկան և 2016 թվականի եռամսյակային ու կիսամյակային կտրվածքներով, գումարը՝ 342.0 հազ. ՀՀ դրամ:

Կատարվել են նաև հետևյալ ծրագրային աշխատանքները.

- 2017-2020 թվականների համար գույքահարկի բազայի ստեղծման ծրագիր, գումարը՝ 5.6 մլն ՀՀ դրամ: Վերագնահատվել է 46,046 միավոր անշարժ գույք.

- կադաստրային գործերից հաշվառման տվյալները «NKRPIS» ծրագրում մուտքագրման աշխատանքներ, գումարը՝ 11.6 մլն ՀՀ դրամ: Մուտքագրվել են տվյալներ 109,832 կադաստրային գործից:

<u>Բյուջետային քաղաքականություն</u>

2016 թվականի ընթացքում բյուջետային քաղաքականությունն նպատակաուղղված էր բնակչության սոցիալական հարցերի լուծմանը, կենսամակարդակի բարձրացմանը, պետական միջոցների նպատակային ծրագրավորման գործընթացների իրականացմանը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2016 թվականի մայիսի 30-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 167-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն կազմակերպվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման և կազմման աշխատանքները:

Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը, որը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 6-ին, որի համաձայն՝

- 3.0 մլրդ դրամով նվազել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված «Հարկային եկամուտներ և պետական տուրքեր» եկամտատեսակը և 3.7 մլրդ ՀՀ դրամով ավելացել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի պակասուրդը.

- 2.0 մլրդ ՀՀ դրամով նվազել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մի շարք ծրագրերի գծով նախատեսված հատկացումները և 2.7 մլրդ ՀՀ դրամով ավելացել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված կապիտալ ներդրումների ծրագիրը:

Հաշվապահական հաշվառման և աուդիտի կարգավորման ու մեթոդաբանության ոլորտում 2016 թվականին կատարված աշխատանքները ուղղված էին հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման, մասնավոր հատվածի հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների կարգավորմանը:

2016 թվականին մեկնարկել են հանրային հատվածի կազմակերպությունների՝ հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման աշխատանքները, որոնք ընդգրկել են հանրային հատվածի հաշվապահական հաշվառման օրենսդրահիրավական դաշտի ձևավորումը և

նոր համակարգի աստիճանաբար ներդրումը, որը պետք է իրականացվի 2017-2020 թվականների ընթացքում:

Կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ 2017 թվականի հունվարի 1-ից ներդրվող նոր համակարգին անցնող հանրային հատվածի թվով 14 կազմակերպությունների հաշվապահների համար (11 պետական կառավարչական հիմնարկներ և 3 ՊՈԱԿ):

Տարվա ընթացքում իրականացվել են հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական և խորհրդատվական աշխատանքներ: Շարունակվել է կատարվող օրենսդրական փոփոխություններին հասարակության իրազեկման աշխատանքները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում պարբերաբար հրապարակվող պարզաբանումների տեսքով:

Կազմակերպվել են հաշվապահների և աուդիտորների որակավորման քննություններ:

<u>Հարկային քաղաքականություն</u>

2016 թվականին շարունակվել են աշխատանքները հսկողական գործընթացների արդյունավետության բարձրացման, օրենսդրական դրույթների կատարելագործման, հանրային իրազեկման աշխատանքների ընդլայնման, ինչպես նաև համակարգի արդիականացման ուղղություններով:

2016 թվականին իրականացվել են պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 243 ստուգում: Նշված ստուգումներով հաշվարկված պարտավորությունները կազմել են 534.8 մլն ՀՀ դրամ: Հաշվետու տարում կատարված ստուգումներով բյուջե մուտքագրված գումարները կազմել են 444.9 մլն ՀՀ դրամ, իսկ ընթացիկ և նախորդ տարիներին կատարված բոլոր ստուգումների մասով բյուջե է մուտքագրվել 505.7 մլն ՀՀ դրամ:

Հարկային իրավախախտումների դեմ համակարգված պայքար իրականացնելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հանձնարարականով մշակվել է «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգը, որի շրջանակներում իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնների խախտման 69, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 29, պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդի հայտնաբերման 10, վարձու աշխատողների չձևակերպման 9, առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների ու դրանց գների գրանցման անհամապատասխանության 7 դեպքեր:

Թեթև մարդատար ավտոմեքենաներով ուղևորափոխադրումների գործունեություն իրականացնող անձանց հայտնաբերելու և հարկման դաշտ բերելու նպատակով ձեռնարկվել են լայնածավալ միջոցառումներ, այդ թվում՝ անհատական հանդիպումների տեսքով, որի արդյունքում հարկային մարմնում հաշվառման կամ գործունեության վերսկսման համար դիմել են ուղևորափոխադրումների գործունեություն իրականացնող շուրջ 80 տնտեսավարող սուբյեկտներ:

Կամերալ հսկողության շրջանակներում իրականացվել են հարկ վճարողների 9,228 հաշվարկ-հաշվետվությունների ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 1,211 խախտումների մասով հարկ վճարողներին առաջարկվել է կատարել ճշտումներ:

Հարկ վճարողների իրացման իրական ծավալների վերհանման նպատակով հացի արտադրության ոլորտում գործող 46 հարկ վճարողների մոտ 2016 թվականի տարբեր հաշվետու ժամանակահատվածներում իրականացվել են թվով 91 արտադրանքի արտադրության և իրացման փաստացի գների չափագրումներ, որոնց արդյունքում 19 հարկ վճարողների մոտ հայտնաբերվել են իրացման ծավալների էական թերհայտարարագրումներ և առաջարկվել է արտացոլել իրական ծավալները:

2016 թվականի ընթացքում կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին թվով 805 որոշում՝ 11.7 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով, որից գանձվել է 11.0 մլն ՀՀ դրամը կամ առաջադրվածի 94 տոկոսը:

Աշխատանքներ են տարվել նաև հարկային հանցագործությունների կանխման, հակաիրավական գործունեություն իրականացնող անձանց պատասխանատվության ենթարկման և պետությանը պատճառված վնասների վերականգնման ուղղությամբ:

Նախաքննության ընթացքում գտնվող 2 քրեական գործով վերականգնվել է պետությանը հասցված 7.0 մլն ՀՀ դրամի չափով վնասը:

Զգալի աշխատանքներ են տարվել նաև հարկ վճարողների կուտակած պարտավորությունների նվազեցման ուղղությամբ՝ պարբերաբար ներկայացվել ծանուցումներ, իրականացվել վճարունակության ուսումնասիրություններ, կիրառվել արգելադրումներ, ներկայացվել դատական հայցեր:

Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել թվով 32 հայց՝ 100.0 մլն ՀՀ դրամ հայցապահանջի գումարով: Ներկայացված հայցերի մասով (այդ թվում՝ նախորդ տարիների մասով) դատական մարմինների կողմից հաշվետու տարում կայացվել է 78 վճիռ՝ 215.7 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով, ընդ որում՝ 212.6 մլն ՀՀ դրամը կամ 98.5 տոկոսը բավարարվել է, 1.4 մլն ՀՀ դրամը՝ մարվել դատական գործընթացում, 1.7 մլն ՀՀ դրամը՝ մերժվել մասնակիորեն, իսկ 5.9 մլն ՀՀ դրամ գումարով հայցապահանջները դեռևս գտնվում են դատական վարույթում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով նշանակված և չմարված վարչական տուգանքների բռնագանձման համար դատարան է ներկայացվել թվով 36 հայցադիմում՝ շուրջ 0.8 մլն ՀՀ դրամի չափով վճարման կարգադրություն արձակելու մասին, որոնք ամբողջությամբ բավարարվել են դատարանի կողմից:

2016 թվականի ընթացքում նախաձեռնվել են 11 օրենքների նախագծեր:

Օրենսդրական փոփոխությունների առաջին փաթեթը պայմանավորված է 2016 թվականի ապրիլի 1-ից հետո հակառակորդի կողմից սանձազերծված լայնածավալ ռազմական գործողությունների հետևանքով հանրապետությունում ձևավորված իրավիճակով, և միտված է տնտեսության որոշ ոլորտներում առավել մեղմ հարկային քաղաքականության կիրառմանը:

Օրենսդրական փոփոխությունների մյուս փաթեթը, որը կիրառության մեջ է դրվել 2017 թվականի հունվարի 1-ից, միտված է փոքր ձեռնարկատիրության համար հարկման առավել պարզ մեխանիզմների սահմանմանը, օրենքների կիրառության ընթացքում առաջացած խնդիրների վերացմանը, ինչպես նաև հարկ վճարողների կուտակած պարտավորությունների աստիճանական մարման գործընթացի կանոնակարգմանը:

2016 թվականին հարկային վարչարարական բարեփոխումների շրջանակներում առանցքային ուղղություն է շարունակել համարվել հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի բարելավումը, հանրային իրազեկման աշխատանքների ընդլայնումը: Այդ նպատակով հարկ վճարողների հետ պարբերաբար կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ, անցկացվել ուսուցողական սեմինարներ: Մասնավորապես, 2016 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունները հարկ վճարողներին ծանոթացնելու և այն ավելի ընկալելի դարձնելու նպատակով վերադաս հարկային մարմնի կողմից հանրապետության բոլոր շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում կազմակերպվել են 7 սեմինար-խորհրդակցություններ:

Հաշվարկ-հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման գործընթացում հարկ վճարողներին աջակցելու նպատակով կազմվել են ուսուցման կարիք ունեցող հարկ վճարողների ցանկերը, ըստ որի տարվա ընթացքում թվով 555 հարկ վճարողների հետ կազմակերպվել են ուսուցողական դասընթացներ:

Հաշվետու տարում մշակվել և գործողության մեջ է դրվել «Նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության և սպասարկման նպատակով այցելությունների» կանոնակարգը, որի նպատակն է հարկ վճարողներին ապահովել բարձրորակ սպասարկմամբ, բացատրական աշխատանքների իրագործման միջոցով բարձրացնել նրանց իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև ներկայացնել գործող հարկային և պարտադիր վճարների մասին օրենսդրության և դրանց հետ կապված այլ նորմատիվ ակտերի պահանջները: Գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով նորաստեղծ հարկ վճարողներին այցելության ընթացքում տրամադրվում են նաև հարկման համապատասխան ռեժիմների (առևտրի հարկով, հաստատագրված վճարներով և ընդհանուր հարկման ռեժիմների) վերաբերյալ ուղեցույցներ, որոնցում պարունակվող տեղեկատվության իմացությունը բիզնեսն արդյունավետ կազմակերպելու և հնարավոր սխալներից խուսափելու անհրաժեշտ պայմաններից է:

Պարբերաբար հանրային իրազեկման աշխատանքներ են իրականացվել նաև հարկային մարմնի պաշտոնական կայքէջի միջոցով. 2016 թվականին հարկային մարմնի կայքէջի այցելուների քանակը կազմել է 143,584, իսկ միջին ամսական այցելուների քանակը՝ 11,965:

Պարզաբանման աշխատանքներ են իրականացվել նաև անհատական իրազեկման մակարդակով: Մասնավորապես, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից տեղերում կազմակերպվել է 2,595 ընդունելություն, որոնց ընթացքում տրվել են պարզաբանումներ և ցուցումներ հարկ վճարողների կողմից բարձրացված հարցերի շուրջ:

Պարզաբանումներ են տրվել 50 հարկ վճարողների գրավոր հարցադրումներին, այդ թվում՝ 26-ը ստացվել և պատասխան է տրվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության կայքէջի առցանց ռեժիմով:

Այս առումով կարևորվում է դեկտեմբեր ամսից հարկային մարմնում գործարկված «Skype» հեռաձայնային ծառայությունը, որի միջոցով Արցախում ներդրումներ կատարելու պատրաստակամություն ունեցող գործարարները, գործող հարկ վճարողներն ու հարկային ոլորտով հետաքրքրվող այլ անձինք ցանկացած կետից մասնագետին կարող են հղել հարկային օրենսդրությանը վերաբերող իրենց հետաքրքրող հարցերը և օպերատիվ կարգով ստանալ դրանց պատասխանները:

Մեծ տեղ է հատկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը, ինչը հնարավորություն է ընձեռնում հարկ վճարողներին մատուցել ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված ծառայություններ՝ ապահովելով հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետությունը: Մասնավորապես, 2016 թվականի հունվարի 1-ից գործարկվել է բոլոր հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման ենթահամակարգը, որից ներկայումս օգտվում է 1595 հարկ վճարող: Ընդ որում, 692-ը՝ 36 մլն ՀՀ դրամը գերազանցող իրացման շրջանառություն ունեցող հարկ վճարողներն են, որոնց համար հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով հանձնումը պարտադիր պահանջ է, իսկ 903 հարկ վճարողներ կամավոր հիմունքներով են միացել էլեկտրոնային համակարգին:

2016 թվականի հունիս ամսից ներդրվել է հարկ վճարողների գրանցման և հաշվառման համարների տրամադրման մեկ պատուհան սկզբունքը, մշակվել պետական ռեգիստրի և հարկային մարմնի միջև տեղեկատվության առցանց փոխանակման ենթածրագիրը:

Տարվա ընթացքում թվով 576 գործատուների հետ կնքվել են հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու վերաբերյալ պայմանագրեր և տրվել օգտվողի անուն ու գաղտնաբառ՝ վերջիններիս ներկայացնելով էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման առավելությունները:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Պետական բյուջեի եկամուտների վերլուծությունը

2016 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի սեփական եկամուտները կազմել են 33711099,8 հազար ՀՀ դրամ (նեռառյալ գործատուի մոտ եկամտային հարկից կատարված ծախսերի գումարը 590031,4 հազար ՀՀ դրամ) կամ տարվա ծրագրով նախատեսված մուտքերի մակարդակի 95,6 տոկոսը:



2015 թվականի համեմատ 2016 թվականի պետական բյուջեի եկամուտները նվազել են 2,1 տոկոսով կամ 725274,4 հազար ՀՀ դրամով: Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով մուտքերը կազմել են 32432347,1 հազար ՀՀ դրամ, որը կազմում է պլանավորված ցուցանիշի 102,7 տոկոսը կամ ավել 850069,3 հազար ՀՀ դրամ, ընդ որում՝ 2015 թվականի համեմատ այդ ցուցանիշը նվազել է 2,3 տոկոսով կամ 743123,5 հազար ՀՀ դրամով:



2016 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների 32432347,1 հազար ՀՀ դրամը բաժին է ընկել հարկային եկամուտներին և պետական տուրքին՝ նախորդ տարվա 33175470,6 հազար ՀՀ դրամի դիմաց: Պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 1278752,7 հազար ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 1260903,6 հազար ՀՀ դրամի դիմաց:



Հարկային եկամուտներ

2016 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 31884494,9 հազար ՀՀ դրամ՝ պլանային ցուցանիշի 31035000,0 հազար ՀՀ դրամի դիմաց: 2015 թվականի համեմատ պետական բյուջեի հարկային եկամուտները նվազել են 859751,4 հազար ՀՀ դրամով կամ 2,6 տոկոսով: Հարկային եկամուտների հաշվին է ապահովվել պետական բյուջեի եկամուտների 94,6 տոկոսը:



Եկամտային հարկ

2016 թվականի եկամտային հարկի գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են 15026217,4 հազար ՀՀ դրամ (հաշվի առած ծախսերի 2016 թվականի չափը՝ 590031,4 հազար ՀՀ դրամ)՝ ապահովելով հարկային եկամուտների 47,1 տոկոսը և ընդհանուր բյուջետային եկամուտների 44,6 տոկոսը, պլանավորված ցուցանիշը կատարվել է 101,7 տոկոսով կամ ավել 254517,4 հազար ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ եկամտային հարկի գծով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի մուտքերն աճել են 258380,7 հազար ՀՀ դրամի չափով կամ 1,7 տոկոսով: Եկամտային հարկի գծով պետական բյուջեի մուտքերի ավելացումը պայմանավորված է վարչարարական աշխատանքների արդյունքում եկամտային հարկով հարկվող օբյեկտների ավելացմամբ, բնականոն աճով, ինչպես նաև նախորդ տարիներից կուտակված պարտավորությունների մուտքագրմամբ: Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում 238 վարձու աշխատողի 116179,7 հազար ՀՀ դրամի չափով կատարվել է վերադարձ՝ նախորդ տարվա 35957,8 հազար ՀՀ դրամի դիմաց,որը նվազեցվել է պետական բյուջե մուտքագրված եկամտային հարկի գումարներից:

Ավելացված արժեքի հարկ

Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում եկամտային հարկից հետո տեսակարար կշռով երկրորդ հարկատեսակն ավելացված արժեքի հարկն է: 2016 թվականի ավելացված արժեքի հարկի գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են 11119635,4 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 34,9 տոկոսը և ընդհանուր բյուջետային եկամուտների 33,0 տոկոսը, պլանավորված ցուցանիշը կատարվել է 100,1 տոկոսով կամ ավել 7315,4 հազար ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ ավելացված արժեքի հարկի գծով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի մուտքերը նվազել են 24930,1 հազար ՀՀ դրամի չափով կամ 0,2 տոկոսով:

Ակցիզային հարկ

Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ակցիզային հարկի հաշվին ապահովվել են 148970,2 հազար ՀՀ դրամի մուտքեր՝ կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 0,5 տոկոսը և ընդհանուր բյուջետային եկամուտների 0,4 տոկոսը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 1970,2 հազար ՀՀ դրամով կամ 1,3 տոկոսով:

Շահութահարկ

2016 թվականի շահութահարկի գծով պետական բյուջեի եկամուտները կազմել են 2054738,5 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 6,4 տոկոսը և ընդհանուր եկամուտների 6,1 տոկոսը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 12,3 տոկոսով կամ 225538,5 հազար ՀՀ դրամով: Պլանային ցուցանիշի նկատմամբ մուտքերի ավելացումը պայմանավորված է կապի և շինարարության ոլորտներում գործող հարկ վճարողների կողմից մուտքագրված գումարների աճով: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի գծով բյուջեի մուտքերը նվազել են 222487,8 հազար ՀՀ դրամի չափով կամ 9,8 տոկոսով: Նախորդ տարվա նկատմամբ մուտքերի նվազումը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» փակ բաժնետիրական ընկերության կողմից շահութահարկի գումարների պակաս վճարմամբ:

Հաստատագրված վճարներ

Հաշվետու տարում պետական բյուջե մուտքագրված հաստատագրված վճարների գումարը կազմել է 499480,3 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 1,6 տոկոսը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 24,8 տոկոսով կամ 99380,3 հազար ՀՀ դրամով: Նախորդ տարվա համեմատ հաստատագրված վճարների գծով մուտքերը նվազել են 118076,8 հազար ՀՀ դրամով կամ 19,1 տոկոսով: Նախորդ տարվա համեմատ մուտքերի նվազումը պայմանավորված է «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունով,համաձայն որի հաստատագրված վճարների գծով արտոնություններ են սահմանվել: Բացի վերոնշվածից 2015 թվականի մուտքերում ներառված են նաև արտոնագրային վճարների գծով մուտքերը, որը 2016 թվականից հաշվառվում է որպես առանձին եկամտատեսակ:

Առևտրի հարկ

2016 թվականին պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների 4,6 տոկոսը և ընդհանուր եկամուտների 4,3 տոկոսն ապահովվել է առևտրի հարկի հաշվին: Այս հարկատեսակի գծով մուտքերը կազմել են 1454893,9 հազար ՀՀ դրամ կամ պլանային ցուցանիշի 103,9 տոկոսը: Նախորդ տարվա համեմատ մուտքերը նվազել են 368216,3 հազար դրամով կամ 20,2 տոկոսով: Նախորդ տարվա նկատմամբ թերակատարումը պայմանավորված է ապրիլյան ռազմական գործողությունների հետևանքով առևտրի ծավալների նվազմամբ:

Բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման վճարներ

Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով 2016 թվականի պետական բյուջե է մուտքագրվել 684080,7 հազար ՀՀ դրամ, պլանավորված ցուցանիշը կատարվել է 124,6 տոկոսով: 2015 թվականի համեմատ վճարի գծով պետական բյուջեի մուտքերը նվազել են 321879,5 հազար ՀՀ դրամով կամ 32,0 տոկոսով, ընդ որում բնապահպանական և բնօգտագործման վճարների մուտքերում ներառված ռոյալթիի գծով մուտքերը նախորդ տարվա համեմատ նվազել են 160994,6 հազար ՀՀ դրամով: Ռոյալթիի գծով թերակատարումը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» փակ բաժնետիրական ընկերության կողմից նախորդ տարվա համեմատ ռոյալթիի պակաս վճարմամբ:

Ավտոճանապարհների շինարարության և նորոգման համար կատարվող մասհանումներ

Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող մասհանումների մուտքերը հաշվետու տարում կազմել են 422105,2 հազար ՀՀ դրամ,

նախատեսված ցուցանիշը գերակատարվել է 41905,2 հազար ՀՀ դրամով կամ 11,0 տոկոսով: Նախորդ տարվա համեմատ մասհանումների գծով մուտքերը նվազել են 1,8 տոկոսով կամ 7858,5 հազար ՀՀ դրամի չափով:

Արտոնագրային վճարներ

Արտոնագրային վճարների գծով մուտքերը 2016 թվականին կազմել են 37679,1 հազար ՀՀ դրամ, որը կազմում է պլանային առաջադրանքի 125,6 տոկոսը:

Այլ հարկային եկամուտներ

Այլ հարկային եկամուտների գծով 2016 թվականի մուտքերը կազմել են 59442,2 հազար ՀՀ դրամ, ծրագրավորված ցուցանիշը գերակատարվել է 1083,7 հազար ՀՀ դրամով կամ 1,9 տոկոսով: Նախորդ տարվա համեմատ այլ հարկային եկամուտների գծով մուտքերը նվազել են 22,9 տոկոսով կամ 17667,2 հազար ՀՀ դրամի չափով: Այլ հարկային եկամուտների գծով նախորդ տարվա նկատմամբ պակաս մուտքագրումը պայմանավորված է հարկային օրենսդրությամբ սահմանված տուգանքների դրույքաչափերի իջեցմամբ:

Ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճար

Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվությունների տրամադրման և օգտագործման պարտադիր վճարների գծով մուտքերը 2016 թվականին կազմել են 199888,2 հազար ՀՀ դրամ կամ պլանավորված ցուցանիշի 100,0 տոկոսը:

Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ

Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի եկամուտները 2016 թվականին կազմել են 177363.8 հազար ՀՀ դրամ, կամ ծրագրավորված ցուցանիշը կատարվել է 113,0 տոկոսով, իսկ նախորդ տարվա համեմատ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով մուտքերն աճել են 16,8 տոկոսով կամ 25519,0 հազար ՀՀ դրամով:

Պետական տուրք

Պետական տուրքի գծով 2016 թվականի պետական բյուջեի մուտքերը կազմել են 547852,2 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի եկամուտների 1,6 տոկոսը: 2015 թվականի համեմատ պետական տուրքի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 27,0 տոկոսով կամ 116627,9 հազար ՀՀ դրամով: Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի գծով մուտքերի աճը պայմանավորված է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման համար գանձվող գումարների 2016 թվականից որպես պետական տուրք գանձմամբ:

Այլ եկամուտներ

2016 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 1278752,7 հազար ՀՀ դրամ՝ պլանային ցուցանիշի 1274200,0 հազար ՀՀ դրամի դիմաց: 2015 թվականի համեմատ պետական բյուջեի այլ եկամուտներն աճել են 17849,1 հազար ՀՀ դրամով կամ 1,4 տոկոսով: Այլ եկամուտների հաշվին ապահովվել է պետական բյուջեի եկամուտների 3.8 տոկոսը:

Բաժնետիրական կապիտալում ներդրումներից ստացվող շահութաբաժինների տեսքով մասհանումներից մուտքագրված գումարը 2016 թվականին կազմել է 554446,8 հազար ՀՀ դրամ ՝ ապահովելով այլ եկամուտների 43,4 տոկոսը և ընդհանուր բյուջետային եկամուտների 1.6 տոկոսը,պլանավորված ցուցանիշը կատարվել է 95,6 տոկոսով:Նախորդ տարվա համեմատ շահութաբաժինների գծով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի մուտքերն աճել են 134686,6 հազար ՀՀ դրամի չափով :

Պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող հողի և գույքի վարձակալությունից 2016 թվականի պետական բյուջե է մուտքագրվել 126709,8 հազար ՀՀ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 78,7 տոկոսը:Նախորդ տարվա համեմատ հողի և գույքի վարձակալությունից մուտքերն աճել են 32,2 տոկոսով կամ ավել 30832,4 հազար ՀՀ դրամով:

Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարներից մուտքերը 2016 թվականի կազմել են 5357,5 հազար ՀՀ դրամ՝ պլանային ցուցանիշի 10000,0 հազար ՀՀ դրամի դիմաց:

2016 թվականի իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի գծով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի մուտքերը կազմել են 162515,7 հազար ՀՀ դրամ կամ բյուջեով նախատեսված ցուցանիշը կատարվել է 86,1 տոկոսով:Նախորդ տարվա համեմատ պատժամիջոցներից մուտքերն աճել են 8,5 տոկոսով:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով մուտքերը կազմել են 220836,0 հազար ՀՀ դրամ կամ բյուջեով նախատեսված ցուցանիշը կատարվել է 119,8 տոկոսով: Նախորդ տարվա համեմատ մուտքերը նվազել են 23417,1 հազար ՀՀ դրամով կամ 9,6 տոկոսով:

Անտառանյութի իրացումից մուտքերը բյուջեով նախատեսված 150000,0 հազար ՀՀ դրամի դիմաց փաստացի կազմել են 208886,9 հազար ՀՀ դրամ կամ ավել 58886,9 հազար ՀՀ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ մուտքերն աճել են 9902,0 հազար ՀՀ դրամով:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան՝ պետական բյուջեի սեփական եկամուտներում, ըստ եկամտատեսակների, ներառված են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու տարում կազմել են 354382,0 հազար ՀՀ դրամ:

Միջպետական վարկ

Հայաստանի Հանրապետությունից ստացված միջպետական վարկը հաշվետու տարում կազմել է 47266913,0 հազար ՀՀ դրամ:

Ապառքների մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ առ 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկերի գծով ապառքները կազմել են 1889425.3 հազար ՀՀ դրամ, պարտադիր վճարների գծով՝ 31930,3 հազար ՀՀ դրամ, իսկ շահութաբաժինների գծով՝ 37830,0 հազար ՀՀ դրամ:

Պետական բյուջեի ծախսերի վերլուծությունը

2016 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են 84670449,3 հազար ՀՀ դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսված ծրագրի 95,0 տոկոսը: 2015 թվականի համեմատ ծախսերն աճել են 1562743,9 հազար ՀՀ դրամով կամ 1,9 տոկոսով:

Գործառական դասակարգմամբ

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

Պետական ծախսերի այս բաժնում արտացոլված են օրենսդիր և գործադիր մարմինների պահպանման, պետական կառավարման, ֆինանսական, ինչպես նաև արտաքին հարաբերությունների հետ կապված ծախսեր: Այս ուղղությամբ ծախսվել է պետական միջոցների 12,2 տոկոսը կամ 10316306,5 հազար ՀՀ դրամ: Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի կատարողականն ապահովվել է բյուջեով նախատեսված ցուցանիշի 92,4 տոկոսի չափով: 2015 թվականի համեմատ ծախսերը նվազել են 431148,3 հազար ՀՀ դրամով կամ 4,0 տոկոսով:

Պաշտպանություն

2016 թվականին այս ուղղությամբ ծախսվել է 49865,6 հազար ՀՀ դրամ կամ ծրագրավորված ցուցանիշը կատարվել է 99,7 տոկոսով:

Հասարակական կարգի պահպանություն, անվտանգություն և դատական գործունեություն

Հասարակական կարգի պահպանություն, անվտանգություն և դատական գործունեություն բաժնի ծախսերի միջոցով ֆինանսավորվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության համակարգերը, դատական դեպարտամենտի, Գերագույն, վերաքննիչ և ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները: Այս բաժնի ծախսերը կազմել են ընդհանուր պետական ծախսերի 7,8 տոկոսը կամ 6603380,9 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորումն իրականացվել է նախատեսված ծավալի 96,6 տոկոսի չափով: 2015 թվականի համեմատ ծախսերն աճել են 2,7 տոկոսով կամ 172628,0 հազար ՀՀ դրամով:

Տնտեսական հարաբերություններ

Այս բաժնի ծախսերի միջոցով ֆինանսավորվել են տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների հետ կապված ծախսերը, գյուղատնտեսության, անտառային տնտեսության, տրանսպորտի և այլ բնագավառների գործունեության ծախսերը: Այս բաժնի ծախսերի ֆինանսավորմանն է ուղղվել պետական բյուջեի ծախսերի 11,1 տոկոսը կամ 9407666,6 հազար ՀՀ դրամ, ինչը կազմում է ծրագրավորված ցուցանիշի 95,8 տոկոսը: Նախորդ տարվա համեմատ ծախսերը նվազել են 3,0 տոկոսով կամ 289673,3 հազար ՀՀ դրամով:

Հաշվետու տարում ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների խմբի ծախսերը կազմել են 3243158,5 հազար ՀՀ դրամ՝ 98,9 տոկոսով ապահովելով ծրագրային ցուցանիշի կատարումը: 2015 թվականի համեմատ ծախսերը նվազել են 5,6 տոկոսով կամ 191547,7 հազար ՀՀ դրամով՝ պայմանավորված ընդերքի ուսումնասիրման ծրագրի ֆինանսավորման կրճատմամբ շուրջ 114000,0 հազար ՀՀ դրամով կամ 50 տոկոսով:

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որսորդության խմբի ծախսերը 2016 թվականին կազմել են 3625767,7 հազար ՀՀ դրամ՝ 96,4 տոկոսով ապահովելով ծրագրային ցուցանիշի կատարումը: 2015 թվականի համեմատ ծախսերն աճել են 126621,3 հազար ՀՀ դրամով կամ 3,6 տոկոսով՝ պայմանավորված հիմնական գյուղատնտեսական միջոցառումների ծախսերի ավելացմամբ, ընդ որում 2015 թվականի բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացման ծախսերի պարտքերի մարմամբ:

2016 թվականին վառելիք և էներգետիկա խմբի ծախսերը կազմել են 2370000,0 հազար ՀՀ դրամ: 2015 թվականի համեմատ ծախսերն աճել են 125000,0 հազար ՀՀ դրամով կամ 5,6 տոկոսով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

Հաշվետու տարում տնրասպորտի (օդային տրանսպորտ) ծախսերը կատարվել են 82,1 տոկոսով կամ 113201,8 հազար ՀՀ դրամով: Նախորդ տարվա համեմատ ծախսերը նվազել են 52,3 տոկոսով կամ 103167,5 հազար ՀՀ դրամով՝ պայմանավորված ոլորտում գործող երկու փակ բաժնետիրական ընկերությունների միացմամբ:

2016 թվականի ընթացքում «Այլ բնագավառներ» խմբի ծախսերը կազմել են ավելի քան 267177,0 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով 99,0 տոկոս կատարողական: 2015 թվականի համեմատ ծախսերը նվազել են 24,2 տոկոսով կամ 85201,8 հազար ՀՀ դրամով՝ պայմանավորված «Հյուրանոցային և հասարակական սննդի օբյեկտներ» դասի ծախսերի կրճատմամբ ավելի քան 88785,3 հազար ՀՀ դրամով:

2016 թվականին այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների գծով փաստացի ցուցանիշը կազմել է -211638,4 հազար ՀՀ դրամ: Այս ծախսերի խմբում ընդգրկված է ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը բացասական նշանով,որը կազմում է 231807,2 հազար ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերը կազմել են 146497,0 հազար ՀՀ դրամ, ինչը կազմում է պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 0,2 տոկոսը, ծրագրավորված ցուցանիշը

կատարվել է 95,9 տոկոսով: Այս բաժնի ծախսերն ուղղվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի պահպանմանը: 2015 թվականի համեմատ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ

Պետական ծախսերի այս բաժնում արտացոլված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանման և ջրամատակարարման ծառայությունների սուբսիդավորման ծախսերը: Ծախսվել է պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 0,8 տոկոսը կամ 727153,8 հազար ՀՀ դրամ, կատարողականն ապահովվել է բյուջեով նախատեսված ցուցանիշի 97,5 տոկոսի չափով: 2015 թվականի համեմատ բաժնի ծախսերը նվազել են 9,2 տոկոսով կամ 74085,1 հազար ՀՀ դրամով :

Առողջապահություն

Պետական բյուջեի ծախսերի գործառական դասակարգման այս բաժնի միջոցով ֆինանսավորվել են առողջապահության բնագավառի պետական կառավարման մարմինը, բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծախսերը, արտահիվանդանոցային, հիվանդանոցային և հանրային առողջապահական ծառայությունների իրականացման հետ կապված ծախսերը: Առողջապահության ֆինանսավորման փաստացի ծավալները կազմել են 5662045,0 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով բյուջեով նախատեսված ցուցանիշի 95,2 տոկոսը: Առողջապահությանն ուղղված ծախսերը կազմել են պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 6,7 տոկոսը: Նախորդ տարվա համեմատ ծախսերն աճել են 162245,8 հազար ՀՀ դրամի չափով կամ 3,0 տոկոսով:

2016 թվականին բժշկական ապրանքների,սարքերի և սարքավորումների ծախսերը կազմել են 193977,7 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով ծրագրի 92,7 տոկոս կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերն աճել են 14,1 տոկոսով կամ 23977,3 հազար ՀՀ դրամով՝ պայմանավորված բնակչության համար դիաբետոնի և ինսուլինի ձեռքբերմամբ:

Հաշվետու տարում պետական բյուջեից արտահիվանդանոցային ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 2183928,9 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով ծրագրի 94,3 տոկոսով կատարում: 2015 թվականի համեմատ ծախսերն աճել են 1,4 տոկոսով կամ 31080,1 հազար ՀՀ դրամով, կապված անգիոգրաֆիայի կենտրոնում նոր ծառայության՝ էնդովասկուլյար վիրաբուժության ներդրման, հեմոդիալիզի հիվանդների թվի ավելացման հետ:

2016 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից հիվանդանոցային ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 2364480,4 հազար ՀՀ դրամ՝ 96,4 տոկոսով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ ծախսերն աճել են 2,1 տոկոսով կամ 48518,9 հազար ՀՀ դրամով՝ պայմանավորված 2015 թվականի պարտքերի մարմամբ:

Հաշվետու տարում ավելի քան 281449,1 հազար ՀՀ դրամ է օգտագործվել հանրային առողջապահական ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 88,2 տոկոս կատարողական: 2015 թվականի համեմատ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Այլ դասերին չպատկանող առողջապահության խմբի շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում օգտագործվել է ավելի քան 638208,9 հազար ՀՀ դրամ, որոնց կատարողականը կազմել է 97,7 տոկոս: Նախորդ տարվա համեմատ ծախսերն աճել են 9,7 տոկոսով կամ 56493,5 հազար ՀՀ դրամով՝ պայմանավորված «Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ծախսերի փոխհատուցում» և «Բարեգործական ծրագրերի օժանդակություն» ծրագրերի ծախսերի ավելացմամբ:

Հանգիստ, մշակույթ և կրոն

Այս բաժնի ծախսերի գծով ֆինանսավորումն ընդգրկում է ինչպես նշված բնագավառների պետական կառավարման, այնպես էլ հանգստի և սպորտի, մշակութային, ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական, կրոնական և հասարակական այլ ծառայությունների ֆինանսավորումը: Այս ուղղությամբ ծախսված միջոցները կազմել են ընդհանուր ծախսերի 3,4 տոկոսը և ապահովել են նախատեսված մակարդակի 96,3 տոկոսը՝ կազմելով 2853050,0 հազար ՀՀ դրամ: 2015 թվականի համեմատ ծախսերն աճել են 114186,6 հազար ՀՀ դրամի չափով կամ 4,2 տոկոսով:

Հաշվետու տարվա ընթացքում հանգստի և սպորտի ծառայություններին տրամադրվել է 280789,9 հազար ՀՀ դրամ՝ 92,7 տոկոսով ապահովելով տարեկան ծրագիրը: 2015 թվականի համեմատ խմբի ծախսերը նվազել են 4,3 տոկոսով կամ 12536,6 հազար ՀՀ դրամով՝ պայմանավորված մարզական միջոցառումների կրճատմամբ:

2016 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից 1402399,4 հազար ՀՀ դրամ տրամադրվել է մշակութային ծառայությունների խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 96,2 տոկոսը: 2015 թվականի համեմատ ծախսերն աճել են 12,5 տոկոսով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Հաշվետու տարում ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման ու հրատարակչական ծառայությունների ծախսերը կազմել են 811892,6 հազար ՀՀ դրամ կամ նախատեսվածի 99,6 տոկոսը: 2015 թվականի համեմատ ծախսերն աճել են 0,8 տոկոսով կամ 6326,6 հազար ՀՀ դրամով:

2016 թվականին 208131,1 հազար ՀՀ դրամ է տրամադրվել կրոնական և հասարակական այլ ծառայությունների խմբի ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք կատարվել են 90,1 տոկոսով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2948,8 հազար ՀՀ դրամով՝ պայմանավորված երիտասարդական ծրագրերի կրճատմամբ:

Այլ դասերին չպատկանող հանգստի,մշակույթի և կրոնի դասի շրջանակներում ծախսվել է 149837,0 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով 95,8 տոկոս կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերը նվազել են 32741,2 հազար ՀՀ դրամով կամ 17,9 տոկոսով՝ պայմանավորված կառուցվածքային փոփոխությամբ:

<u>Կրթություն</u>

Կրթության բաժնի կազմում բյուջեից ֆինանսավորվել են նշված բնագավառի պետական կառավարման, կրթության ամբողջ համակարգի և կրթությանն օժանդակ ծառայությունները: Նախատեսված ծավալների նկատմամբ փաստացի ֆինանսավորումը կազմել է 97,4 տոկոս, որի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում կազմել է 15,8 տոկոս: Հաշվետու տարում այս խմբի ծախսերը կազմել են 13393020,6 հազար ՀՀ դրամ: 2015 թվականի համեմատ բաժնի ծախսերն աճել են 406828,4 հազար ՀՀ դրամի չափով կամ 3,1 տոկոսով:

2016 թվականի պետական բյուջեի կրթությանը հատկացված միջոցներից 904380,9 հազար ՀՀ դրամն ուղղվել է նախադպրոցական կրթությանը՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 88,1 տոկոսի կատարողական և 12,1 տոկոսով կամ 98522,8 հազար ՀՀ դրամով գերազանցելով 2015 թվականի ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված է նոր նախադպրոցական ուսումնական հաստատությունների ստեղծման հետ:

Հաշվետու տարում տարրական,հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության բնագավառներում հանրակրթական ուսուցման ծախսերը կատարվել են 98,8 տոկոսով կազմելով ավելի քան 9702630,3 հազար ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 0,9 տոկոսով կամ 87781,2 հազար ՀՀ դրամով՝ պայմանավորված սովորողների և դասարան-լրակազմերի թվի ավելացմամբ ու էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ կապված սակագնի բարձրացման հետ:

2016 թվականին նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության խմբի ծախսերը կազմել են 554427,3 հազար ՀՀ դրամ կամ նախատեսված հատկացումների 98,7 տոկոսը: 2015 թվականի համեմատ ծախսերն աճել են 15,5 տոկոսով կամ 74478,7 հազար ՀՀ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2016 թվականին «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամի ստեղծմամբ:

Բարձրագույն կրթության գծով 2016 թվականին ծախսվել է 703057,1 հազար ՀՀ դրամ: 2015 թվականի համեմատ ծախսերն աճել են 3,3 տոկոսով կամ 22744,7 հազար ՀՀ դրամով: Ծախսերի ավելացումը պայմանավորված է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» Հիմնադրամ Ստեփանակերտի մասնաճյուղի՝ Շուշի տեղափոխման հետ կապված ծախսերի ավելացմամբ:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում իրականացվող մի շարք ծրագրեր, ինչպես նաև մասնագիտական կրթության գծով որոշ ծրագրեր նախատեսվել են «Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ» դասում: 2016 թվականին այս ուղղությամբ ծախսված միջոցները կազմել են 534989,2 հազար ՀՀ դրամ և ապահովել են նախատեսված մակարդակի

89,3 տոկոսը: 2015 թվականի համեմատ ծախսերն աճել են 105320,5 հազար ՀՀ դրամի չափով կամ 24,5 տոկոսով՝ հիմնականում պայմանավորված 2015 թվականին դասագրքերի ձեռքբերման,տրանսպորտային ծառայությունների և հրատարակչական ծախսերի պարտքերի մարմամբ:

Սոցիալական պաշպանություն

Պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 23,0 տոկոսը՝ 19520148,0 հազար ՀՀ դրամ, ուղղվել է բնագավառի պետական կառավարման և սոցիալական պաշտպանության միջոցառումների ծախսերի ֆինանսավորմանը: 2015 թվականի համեմատ ծախսերը նվազել են 2,1 տոկոսով կամ 417587,7 հազար ՀՀ դրամով:

Հաշվետու տարում ավելի քան 85844,8 հազար ՀՀ դրամ տրամադրվել է վատառողջության և անաշխատունակության խմբին՝ ապահովելով 94,4 տոկոսը կատարողական: 2015 թվականի համեմատ ծախսերը նվազել են 1,3 տոկոսով կամ 1118,9 հազար ՀՀ դրամով՝ պայմանավորված աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության կամ առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման ծրագրի նպաստառուների թվի կրճատմամբ:

Ծերության դասի ծրագրերին 2016 թվականին հատկացվել է 11800369,5 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով 99,4 տոկոս կատարողական: 2015 թվականի համեմատ ծախսերն աճել են 0,7 տոկոսով կամ 81096,8 հազար ՀՀ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակառուների թվի աճով:

2016 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից «Հարազատ կորցրած անձինք» խմբի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 191200,0 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով 95,6 տոկոս կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 12,1 տոկոսով:

«Ընտանիքի անդամներ և զավակներ» խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են 4376888,1 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով 86,2 տոկոս կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 325262,6 հազար ՀՀ դրամով կամ 6,9 տոկոսով:

2016 թվականին գործազրկության խմբի ծրագրերի փաստացի ծախսը կազմել է 5318,9 հազար ՀՀ դրամ:

Այլ դասերին չպատկանող սոցիալական հատուկ արտոնությունների խմբում 2016 թվականի բյուջեի ծախսերը կազմել են 994076,8 հազար ՀՀ դրամ կամ նախատեսվածի 91,0 տոկոսը: 2015 թվականի համեմատ ծախսերը նվազել են 88225,7 հազար ՀՀ դրամով կամ 8,2 տոկոսով՝ պայմանավորված վերաբնակիչների և փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումների ծախսերի կրճատմամբ:

Այլ դասերին չպատկանող՝ սոցիալական պաշտպանության դասի ծախսերը կազմել են 2066449,9 հազար ՀՀ դրամ կամ նախատեսվածի 89,2 տոկոսը: Նախորդ տարվա համեմատ ծախսերը նվազել են 57321,2 հազար ՀՀ դրամով՝ պայմանավորված առողջարանային բուժման և հանգստյան տների ուղեգրերի ձեռքբերման ծախսերի տնտեսմամբ:

Հիմնական բաժիններին չդասվող ծախսեր

Հիմնական բաժիններին չդասվող ծախսերի գծով ֆինանսավորումը կատարվել է պետական բյուջեով նախատեսված ցուցանիշի 94,1 տոկոսի չափով և կազմել է 15991315,3 հազար ՀՀ դրամ, որը բյուջեի ընդհանուր ծախսերի 18,9 տոկոսն է: Այս բաժնի ծախսերում տեղ են գտել կապիտալ ներդրումները – 10915489,9 հազար ՀՀ դրամ,հատուկ նպատակների ծախսերը - 259000,0 հազար ՀՀ դրամ, զորակոչման և այլ միջոցառումների կազմակերպման հետ կապված ծախսերը – 688709,6 հազար ՀՀ դրամ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում պետական բյուջեից պետական տուրքի վճարումները – 2277,8 հազար ՀՀ դրամ:

Հաշվետու տարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային հիմնարկների արտաբյուջետային միջոցների ծախսերը կազմել են 367008,6 հազար ՀՀ դրամ, որոնք ըստ գործառական դասակարգմամբ ներառված են պետական բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ:

Ըստ տնտեսագիտական բովանդակության Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի ծախսերն ունեցել են հետևյալ կառուցվածքը, դրանց 84,6 տոկոսն ուղղվել են ընթացիկ ծախսերին, 15,4 տոկոսը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների իրականացման ծախսերի ֆինանսավորմանը:



Ընթացիկ ծախսեր

2016 թվականի ընթացիկ ծախսերի գծով պետական բյուջեից կատարվել է 71616637,2 հազար ՀՀ դրամի ծախս՝ կազմելով պլանավորված ցուցանիշի 95,7 տոկոսը: Նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 1,7 տոկոսով կամ 1173103,2 հազար ՀՀ դրամով:

Աշխատանքի վարձատրություն

Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի 14,2 տոկոսը՝ շուրջ 10194480,3 հազար ՀՀ դրամ, տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նշված ծախսերի գծով օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 94,7 տոկոսը: 2015 թվականի համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերը նվազել են 3,3 տոկոսով:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում

Բյուջեի ընթացիկ ծախսերում ներառվում են ծառայությունների և ապրանքների ձեռքբերման դիմաց կատարված պետական վճարումները: 2016 թվականին այդ նպատակների համար օգտագործված 8962375,4 հազար ՀՀ դրամն ընթացիկ ծախսերի 12,5 տոկոսն է, իսկ ընդհանուր ծախսերի՝ 10,6 տոկոսը: Այն կազմել է պլանավորված ցուցանիշի 92,7 տոկոսը:Նախորդ տարվա համեմատ ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերը նվազել են 17,3 տոկոսով կամ 1871596,4 հազար ՀՀ դրամով:Այս ծախսերում շարունակական ծախսերը կազմել են 1071906,4 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ էներգետիկ ծառայությունների ծախսերը – 333627,2 հազար ՀՀ դրամ, կոմունալ ծառայությունների ծախսերը – 13664,2 հազար ՀՀ դրամ, կապի ծառայությունների ծախսերը- 429300,4 հազար ՀՀ դրամ, ապահովագրական ծախսերը – 13155,8 հազար ՀՀ դրամ, գույքի և սարքավորումների վարձակալության ծախսերը – 63845,2 հազար ՀՀ դրամ և արտագերատեսչական ծախսերը – 218313,6 հազար ՀՀ դրամ, գործուղումների և շրջագայությունների ծախսերը կազմել են 315711,1 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ ներքին գործուղումների ծախսերը – 257261,3 հազար ՀՀ դրամ, արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը – 58449,8 հազար ՀՀ դրամ, պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են - 5733180,5 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ վարչական ծառայությունների ծախսերը – 8672,8 հազար ՀՀ դրամ, համակարգչային ծառայությունների ծախսերը – 10674,1 հազար ՀՀ դրամ, աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների ծախսերը – 5497,2 հազար ՀՀ դրամ, տեղեկատվական ծառայությունների ծախսերը – 90504,9 հազար ՀՀ դրամ, կառավարչական ծառայությունների ծախսերը – 38192,3 հազար ՀՀ դրամ, կենցաղային և հանրային սննդի ծառայությունների ծախսերը – 800,0 հազար ՀՀ դրամ, ներկայացուցչական

գծով ծախսերը – 85389,2 հազար ՀՀ դրամ և ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ծախսերը – 5493450,0 հազար ՀՀ դրամ, այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերման ծախսերը – 49858,4 հազար ՀՀ դրամ, ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների և նյութերի ծախսերը կազմել են 187602,4 հազար դրամ, այդ թվում՝ շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը – 102361,2 հազար ՀՀ դրամ և մեքենաների ու սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը – 85241,2 հազար ՀՀ դրամ, նյութերի ապրանքների ձեռքբերման ծախսերը կազմել են 1604116,6 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ գրասենյակային նյութերի և հագուստի ձեռքբերման ծախսերը – 220879,4 հազար ՀՀ դրամ, գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերման ծախսերը - 117436,0 հազար ՀՀ դրամ, վերապատրաստման և ուսուցման նյութերի (աշխատողների զարգացման) ծախսերը – 82,4 հազար ՀՀ դրամ, տրանսպորտային նյութերի ձեռքբերման ծախսերը – 407256,2 հազար ՀՀ դրամ, առողջապահական և լաբորատոր նյութերի ձեռքբերման ծախսերը – 314363,8 հազար ՀՀ դրամ, կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերման ծախսերը – 82951,7 հազար ՀՀ դրամ և հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման ծախսերը – 461147,1 հազար ՀՀ դրամ:

Տոկոսավճարներ

Ներքին վարկերի տոկոսավճարները կազմել են 1044297,0 հազար ՀՀ դրամ, որը կազմում է ծրագրավորված ցուցանիշի 99,9 տոկոսը: 2015 թվականի համեմատ ծախսերը նվազել են 15,3 տոկոսով կամ 189183,1 հազար ՀՀ դրամով:

Սուբսիդիաներ

2016 թվականի պետական բյուջեից ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին հատկացվել է 16421748,0 հազար ՀՀ դրամի սուբսիդիա, ինչը կազմել է ծրագրավորված ցուցանիշի 97,5 տոկոսը և ընթացիկ ծախսերի 22,9 տոկոսը:Նախորդ տարվա համեմատ ծախսերն աճել են 8,6 տոկոսով կամ 1306450,2 հազար ՀՀ դրամով:

Դրամաշնորհներ

Ընթացիկ ծախսերի 15,3 տոկոսը կամ 10932839,8 հազար ՀՀ դրամը կազմել են համայնքների բյուջեներին տրվող դոտացիաները, պետական և համայնքային առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին տրվող ընթացիկ դրամաշնորհները, այդ թվում՝ պետական բյուջեից համայնքներին տրվող դոտացիաներ – 2670372,0 հազար ՀՀ դրամ, ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին – 1148706,2 հազար ՀՀ դրամ, ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին – 38,1 հազար ՀՀ դրամ, ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին – 3117,0 հազար ՀՀ դրամ և այլ ընթացիկ դրամաշնորհներ – 7110606,5 հազար ՀՀ դրամ: 2015 թվականի համեմատ այս բաժնի ծախսերն աճել են 17,5 տոկոսով կամ 1631687,1 հազար ՀՀ դրամով՝ պայմանավորված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալն ավելացնելու նպատակով 1554500,0 հազար ՀՀ դրամ գումարի ֆինանսավորմամբ:

Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ

Հաշվետու տարում սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով վճարները կազմել են 20234706,7 հազար ՀՀ դրամ կամ նախատեսվածի 95,4 տոկոսը, այդ թվում՝ սոցիալական օգնություն դրամական արտահայտությամբ նպաստներ բյուջեից – 8547300,9 հազար ՀՀ դրամ, որից՝ հիվանդության և հաշմանդամության նպաստներ – 146079,8 հազար ՀՀ դրամ կամ 87,0 տոկոս, մայրության նպաստներ – 907024,8 հազար ՀՀ դրամ կամ 100,0 տոկոս, երեխաների նպաստներ – 3488455,1 հազար ՀՀ դրամ կամ 97,5 տոկոս, հուղարկավորության նպաստներ – 303200,0 հազար ՀՀ դրամ կամ 94,0 տոկոս, կրթական , մշակութային և սպորտային նպաստներ – 130120,5 հազար ՀՀ դրամ կամ 92,0 տոկոս, բնակարանային նպաստներ – 49201,4 հազար ՀՀ դրամ կամ 98,1 տոկոս, այլ նպաստներ – 3523219,3 հազար ՀՀ դրամ կամ 82,1 տոկոս և կենսաթոշակներ – 11687405,8 հազար ՀՀ դրամ կամ 99,4 տոկոս: 2015 թվականի համեմատ ծախսերն աճել են 4,7 տոկոսով կամ 902911,4 հազար ՀՀ դրամով:

Այլ ծախսեր

Հաշվետու տարում այլ ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 5,3 տոկոսը, նախատեսված ցուցանիշը կատարվել է 93,8 տոկոսով կամ 3826190,0 հազար ՀՀ դրամ, այդ թվում

նվիրատվություններ ոչ կառավարչական հասարակական կազմակերպություններին – 173940,5 հազար ՀՀ դրամ, հարկեր, պարտադիր վճարներ և այլն, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ – 104670,2 հազար ՀՀ դրամ, այլ ծախսեր – 3529993,1 հազար ՀՀ դրամ և պահուստային միջոցները – 17586,2 հազար ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ ծախսերը նվազել են 6,4 տոկոսով կամ 261873,6 հազար ՀՀ դրամով:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գումարը կազմել է պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 15,4 տոկոսը կամ 13053812,1 հազար ՀՀ դրամ, ընդ որում, ծախսերը կազմել են 13285619,3 հազար ՀՀ դրամ կամ ծրագրավորված ցուցանիշը կատարվել է 93,0 տոկոսով, այդ թվում՝ շենքերի և շինությունների ձեռքբերում – 125573,2 հազար ՀՀ դրամ, շենքերի և շինությունների կառուցում – 12143418,8 հազար ՀՀ դրամ, շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում – 37977,9 հազար ՀՀ դրամ, մեքենաների և սարքավորումների ձեռքբերում – 563402,2 հազար ՀՀ դրամ, որից տրանսպորտային սարքավորումներ – 137191,1 հազար ՀՀ դրամ,վարչական սարքավորումներ – 226212,1 հազար ՀՀ դրամ և այլ մեքենաների ու սարքավորումների ձեռքբերում – 199999,0 հազար ՀՀ դրամ, այլ հիմնական միջոցների – 415247.2 հազար ՀՀ դրամ, որից՝աճեցվող ակտիվների ծախսեր – 50903,4 հազար ՀՀ դրամ, նախագծահետազոտական ծախսեր – 362129,8 հազար ՀՀ դրամ և հողի ծախսեր – 2214,0 հազար ՀՀ դրամ:

Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը ներառված են բյուջեի ծախսային մասում բացասական նշանով, որը կազմել է 231807,2 հազար ՀՀ դրամ, ծրագրավորված ցուցանիշը գերակատարվել է 11,6 անգամ:

2016 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից կատարված ծախսերի մասին

2016 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի փաստացի ծախսերը կազմել են 3711943,6 հազար ՀՀ դրամ՝ 3844184,2 հազար ՀՀ դրամ ճշտված պլանի դիմաց:

Ըստ ուղղությունների և չափերի գումարները հատկացվել և ծախսվել են հետևյալ նպատակների համար.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմին- 494473,4 հազար ՀՀ դրամ՝ հողամասեր ձեռք բերելու նպատակով – 2214,0 հազար ՀՀ դրամ, Երևան քաղաքում կայանալիք ցուցահանդեսին մասնակցության ծախսերը հոգալու նպատակով – 2000,0 հազար ՀՀ դրամ, գույք, ավտոմեքենա, սարքավորումներ և հուշանվերներ ձեռք բերելու նպատակով - 109189,0 հազար ՀՀ դրամ, մեդալներ ձեռք բերելու նպատակով - 7000,0 հազար ՀՀ դրամ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Աղավնո գյուղի Ձախափնյա թաղամասի N 26 բնակելի տան սեփականատիրոջ սեփականության օտարման դիմաց փոխհատուցման ենթակա գումարը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դեպոզիտ հաշվին փոխանցելու նպատակով - 766,7 հազար ՀՀ դրամ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 939-Ա որոշման համաձայն «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության հանդեպ ստանձնած պարտավորությունների կատարման ապահովելու նպատակով - 26250,7 հազար ՀՀ դրամ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժամանած հյուրերի սննդի և կեցության ծախսերը հոգալու նպատակով - 130000,0 հազար ՀՀ դրամ, 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալում ավելացնելու նպատակով - 179050,0 հազար ՀՀ դրամ, տրանսպորտային ծառայություններ և վառելիք ձեռք բերելու նպատակով

- 11779.7 հազար ՀՀ դրամ, հուշանվերներ, մեդալի տուփեր, գրասենյակային ապրանքներ, կենցաղային և համակարգչային սարքավորումներ ձեռք բերելու նպատակով - 15923,3 հազար ՀՀ դրամ, կենցաղային սարքվորումներ և հուշանվերներ ձեռք բերելու նպատակով - 10300,0 հազար ՀՀ դրամ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությանը- 63000,0 հազար ՀՀ դրամ՝ ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրման նպատակով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը – 166123,8 հազար ՀՀ դրամ՝ «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի 2016 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակաընթացքի պահպանման ծախսերն ապահովելու նպատակով - 131870.8 հազար ՀՀ դրամ, պարգևատրման նպատակով - 2152,0 հազար ՀՀ դրամ, Հայ մշակութային «Արարատ» կազմակերպության Իրանի 48-րդ համահայկական խաղերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատվիրակության համար մարզահագուստի ձեռք բերման, տրանսպորտի և սննդի ծախսերի ապահովման նպատակով - 3494,0 հազար ՀՀ դրամ, 2016 թվականի հոկտեմբերի 21-24-ը Արցախի պետական համալսարանում միջազգային գիտաժողովի կազմակերպման հետ կապված ծախսերը հոգալու նպատակով - 1181,0 հազար ՀՀ դրամ, «Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության Ստեփանակերտ քաղաքում վարձակալական հիմունքներով բնակվող սովորողների բնակարանի վարձի փոխատուցման նպատակով - 1260,0 հազար ՀՀ դրամ, Ամանորի և Սուրբ ծնունդի նվերների ձեռքբերման համար - 24900,0 հազար ՀՀ դրամ, Ամանորյա միջոցառումների ֆինանսական ծախսերի համար - 1266,0 հազար ՀՀ դրամ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությանը – 25784,6 հազար ՀՀ դրամ՝ «Հանրապետական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ակնաբույժներ Մարինե Թևոսյանի և Նարեկ Միքայելյանի՝ Հնդկաստանի Նագապուր քաղաքի Մահատմէ ակնաբուժական կլինիկայում վերապատրաստման դասընթացներ անցնելու համար անհրաժեշտ ֆինանսավորումն ապահովելու նպատակով - 7494.6 հազար ՀՀ դրամ, «Հանրապետական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համար Megalix Cat Plus 125/20/40/80-122CW մակնիշի ռենտգենային խողովակ ձեռք բերելու նպատակով - 18290,0 հազար ՀՀ դրամ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը - 8291,6 հազար ՀՀ դրամ՝ Ստեփանակերտ քաղաքի 261 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի 119 չորս և ավելի մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին սննդամթերք և հիգիենիկ պարագաներ տրամադրելու նպատակով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը- 22505,6 հազար ՀՀ դրամ՝ 2016 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 18-ը Բելգիայում կայանալիք Արցախին նվիրված միջոցառումների կազմակերպման նպատակով – 16080,0 հազար ՀՀ դրամ, 2016 թվականի նոյեմբերի 15-20-ը Բելգիայի թագավորությունում «Արցախի օրեր Բրյուսելում» միջոցառումների կազմակերպման նպատակով - 6425,6 հազար ՀՀ դրամ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը- 57444,4 հազար ՀՀ դրամ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 28-ի «Ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» N 23-Ա որոշման 1-ին կետով նախատեսված միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին

մասնակցելու նպատակով լրացուցիչ 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ և 2016 թվականի մարտի 23-ից մինչև 26-ը Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում կայանալիք «ՄՄՏՃ Մոսկվայի միջազգային տուրիզմ և ճամփորդություն-2016» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասնակցությունն ապահովելու նպատակով - 4036747 (չորս միլիոն երեսունվեց հազար յոթ հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ, 2016 թվականի նոյեմբերի 15-20-ը Բելգիայի թագավորությունում «Արցախի օրեր Բրյուսելում» միջոցառումների կազմակերպման նպատակով - 2187,7 հազար ՀՀ դրամ, 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալում ավելացնելու նպատակով - 49220,0 հազար ՀՀ դրամ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության « Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը - 16351,3 հազար ՀՀ դրամ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Տիգրանակերտ հնավայրի պեղման աշխատանքների իրականացման նպատակով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը – 372008,4 հազար ՀՀ դրամ՝ մի շարք շրջաններում 2016 թվականի մոլախոտային բուսականության դեմ պայքարի կազմակերպման նպատակով – 21193,0 հազար ՀՀ դրամ, 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալում ավելացնելու նպատակով - 331210,0,0 հազար ՀՀ դրամ, մի շարք ընկերությունների հարկային և այլ պարտավորությունների մարման նպատակով - 19605,4 հազար ՀՀ դրամ :

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը- 1773751,2 հազար ՀՀ դրամ՝ մի շարք օբյեկտների վերանորոգման աշխատանքների համար - 60849,3 հազար ՀՀ դրամ, Ստեփանակերտ քաղաքի շենքերի նկուղային հարկերի վերանորոգման, մի շարք օբյեկտների շինարարական, վերանորոգման աշխատանքների և տեղագրական հանույթների իրականացման, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, բնակիչների փոխհատուցման տրամադրման, թվով 3 մանկապարտեզների գույքի ձեռք բերման նպատակով - 106228,8 հազար ՀՀ դրամ, «Հանրապետական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կաթսայատան վերանորոգման համար - 19353,0 հազար ՀՀ դրամ, գույքի ձեռք բերման համար - 46191,8 հազար ՀՀ դրամ, աշխատանքների իրականացման և փոխհատուցման տրամադրման նպատակով - 2483,3 հազար ՀՀ դրամ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մեծ շեն գյուղի մշակույթի տան ցուցավահանակի և «Հանրապետական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տարածքում ճանապարհային նշանների պատրաստման համար - 1064,4 հազար ՀՀ դրամ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Կարո Ալվարյան փողոցում գտնվող երաժշտական դպրոցի շենքի վերակառուցման համար - 23750,0 հազար ՀՀ դրամ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի ուռուցքաբանական կենտրոնի շենքի մարդատար վերելակի մոնտաժման աշխատանքների իրականացման համար - 17170,0 հազար ՀՀ դրամ, 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալում ավելացնելու նպատակով - 520800,0 հազար ՀՀ դրամ, մի շարք ընկերությունների հարկային և այլ պարտավորությունների մարման նպատակով - 149610,8 հազար ՀՀ դրամ, Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի համար թվով երկու կոնտեյներների ձեռք բերման նպատակով – 1270,0 հազար ՀՀ դրամ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Հանրապետական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից օգտագործված գազի պարտքի մարման և

